Հաստատում եմ կառավարման խորհրդի նախագահ՝
_________ *Կ. Խ. Գրիգորյան*

Հաստատում եմ տնօրեն՝
____________ *Է. Գ. Գասպարյան*

ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի պետական քոլեջ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2021 - 2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Արարատ 2022

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթն Արարատի պետական քոլեջի (այսուհետ՝ ԱՊՔ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջներին համապատասխան իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվություն է:

Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման գործընթաց:

Ներքին գնահատման նպատակն է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծառայությունների մատուցման որակիբարելավումը, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման նպաստումը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքիարդյունավետության և ուսանողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

ԱՊՔ-ի ներքին գնահատումն իրականացված է հետևյալ ոլորտներում.

- հաստատության անվտանգություն,
- հաստատության գործունեության արդյունավետությունը և ուսումնական գործընթացի որակ,
- համայնքային մասնակցություն:
- ԱՊՔ-ի ներքին գնահատման գործընթացում ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝
- վիճակագրական տվյալների վերլուծություն,
- փաստաթղթային վերլուծություն,
- դիտարկում և փաստագրում,
- հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն:

Ներքին գնահատումն իրականացված է ԱՊՔ - ի տնօրենի 31.08.2022թ. թիվ 126/Ա հրամանի 11-րդ կետով կազմավորված հանձնաժողովի կողմից /Աղյուսակ 1./:

Հանձնաժողովի նախագահ. ԱՊՔ տնօրեն՝ Է. Գ. Գասպարյան:

Աղյուսակ 1. Տվյալներ հաստատության ներքին գնահատման հանձնաժողովի կազմիվե-րաբերյալ.

| Ազգանուն, Անուն, Հայրանուն | ԱՊՔ-ում զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակա-հատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Գասպարյան Էլլա Գագիկի | Տնօրեն, հանձնաժողովի նախագահ | Բարձրագույն | 27.04.2020 | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ շնորհակալագիր «Ռազմավարու-թյունների կիրառումմեծ քանյակի (G20) խմբի կադրերի մասն. պատ. ռազմավար. կիրառ. մասնագիտ. ուս. հաստ. կառավարում» սերտիֆիկատ |
| Այվազյան Ռուբիկ Ջոհրապի | Որակի պատասխանատու, հանձնաժողովի նախագահի տեղակալ | Բարձրագույն | 27.04.2020 | Միջազգային գիտական հոդվածների հեղինակ |
| Խաչատրյան Մարինե Պետիկի | Տնտեսագիտական առարկաների դասախոս | Բարձրագույն | 27.04.2020 | |
| Վարդազարյան Ռուզաննա Վլադիմիրի | Տնտեսագիտական առարկաների դասախոս | Բարձրագույն | 27.04.2020 | Ոսկե մեդալակիր |
| Հարությունյան Նվարդ Արամայիսի | Հայոց լեզու և հայ գրականություն առարկաների դասախոս, մեթոդիստ | Բարձրագույն | 27.04.2020 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ալթունյան Գոհար Արթուրի | Ուսանողական խորհրդի նախագահ, ուսանող | III կուրս | | |

Ներքին գնահատման սույն հաշվետվությունը հաստատվել է ԱՊՔ տնօրենի 31.08.22թ. № 126/Ա հրամանով և բաղկացած է 6 մասից.

Մաս 1 - ներառում է ընդհանուր տեղեկություններ ԱՊՔ-ի մասին: Մասնավորապես, ներկայացված են ԱՊՔ-ի գործունեությունը նկարագրող վիճակագրական տվյալներ, որոնք ներկայացված են նաև նախորդ 2 տարիների հետ համեմատության մեջ՝ բացահայտելով այս կամ այն ոլորտը նկարագրող ցուցանիշների և չափանիշների դինամիկան:

Մաս 2-ում ներկայացված են ԱՊՔ-ի սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը գնահատող ցուցանիշները և չափանիշները:

Մաս 3-ում ներկայացվում են ԱՊՔ-ի գործունեության արդյունավետությունը գնահատող ցուցանիշները և չափանիշները:

Մաս 4-ում՝ ներառական կրթություն:

Մաս 5-ում ներկայացվում են ԱՊՔ-ի համայնքային մասնակցությունը գնահատող ցուցանիշները և չափանիշները:

Մաս 6-ում ներկայացվում են հաստատության հիմնախնդիրները ու դրանց հաղթահարման ուղիները, ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները, որոնքկարող են հիմք հանդիսանալ ԱՊՔ-ի զարգացման ծրագրի մշակման համար:

2021-2022 ուսումնական տարին ամփոփվել է և պատրաստվել սույն հաշվետվությունը՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ սահմանված ձևի:

## Մաս 1.
## Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ

ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 4-ի №601 որոշմամբ 25.12.2002թ. ՀՀ պետական ռեգիստրի կողմից ձեռք է բերվել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական (վկայական՝ 03 Ա 057860): 19.08.2014թ.-ից՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, տնօրեն՝ Էլլա Գագիկի Գասպարյան (ներդիր 004):

Հաստատության հասցեն՝ ք. Արարատ, Խանջյան փողոց, 67 շենք,

Հաստատության հեռախոսահամարը՝ տնօրեն՝ +374-99-972747 (բջջ.),

Ընդունարան՝ + 374-234-44101,

Էլեկտրոնային հասցեն՝ collegeararat@mail.ru

Հաստատության համացանցային կայքի հասցեն՝ www.ascol.am

**ԱՊՔ-ի հիմնարար արժեքներն են.**

. ուսանողի հաջողությունը,
. մատչելի կրթությունը,
. բարձրակարգ մանկավարժական կազմը,
. ակադեմիական ազատությունն ու ազնվությունը,
. հասարակական միջավայրը,
. սոցիալական գործընկերությունը:

Արարատի պետական քոլեջը նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային ուսումնական հաստատություն է, որը ձգտում է տրամադրել որակյալ կրթություն, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում:

ԱՊՔ-ն միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծառայությունների ՀՀ Արարատի մարզի շուկայի նշանակալի մասնակից է, որը կայուն դիրք է զբաղեցնում միջին մասնագիտական և արհեստագործական կրթության տնտեսագիտական, նախադպրոցական, խոհարարական գործ, գինեգործություն և SS ոլորտի մասնագիտությունների հատվածում: ԱՊՔ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հաստատության և գործատուների հետ համագործակցությանը և դրա ազդեցությանը կրթության բովանդակության վրա: ԱՊՔ-ի դերը լավագույնս բնորոշում է այն իրողությունը, որ արտաքին տարբեր գործոնների, նույնիսկ սրացող ժողովրդագրական խնդիրների, արտագաղթիպայմաններում, ԱՊՔ - ում դիմորդների ներգրավման ցուցանիշն ավելի դանդաղ է նվազում, քան մարզի այլ քոլեջների մասնագիտությունների ընդհանուր դիմորդների թիվը: Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավման նպատակով 2020 թվականին ստեղծվել է ԱՊՔ-ի կայքէջը՝ www.ascol.am, միևնույն ժամանակ հասանելի է նաև ԱՊՔ-ի ֆեյսբուքյան էջը:

ԱՊՔ-ի ծավալած գործունեությունն ու դրան միտված քաղաքականությունն ուղղված են հաստատության որդեգրած առաքելությանը և համահունչ է ՈԱՇ-ին՝ ապահովելով միջին մասնագիտական կրթություն: Ըստ հաստատության առաքելության՝ ԱՊՔ-ն իր գործունեությունը

ծավալում է Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) կրթության 5-րդ մակարդակին համապատասխան: ԱՊՔ-ն ձգտում է տրամադրել որակյալ կրթություն, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում:

Ռազմավարական ծրագրի և դրանից բխող գործողությունների մակարդակով ԱՊՔ-ում մեծ կարևորություն է տրվում մրցունակության ձևավորմանն ու պահպանմանը, որը հիմնված է քոլեջի ներքին ու արտաքին գործոնների վերլուծության, շահակիցների կարիքները լավագույնս բավարարելու ունակության վրա: Արարատի պետական քոլեջը իրականացնում է իր գործունեությունը որակյալ կադրեր պատրաստելով, ինչպես տարածաշրջանի, այնպես էլ այլ մարզերի տարբեր ոլորտների համար, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգերում հետևյալ մասնագիտություններով՝

- **Միջին մասնագիտական կրթական համակարգ /12-ամյա կրթությամբ՝ 2 տարի տևողությամբ, 9-ամյա կրթությամբ՝ 3 տարի տևողությամբ/.**
  - Դեղագործություն
  - Ֆինանսներ
  - Շուկայաբանություն
  - Հաշվապահական հաշվառում
  - Նախադպրոցական կրթություն
  - Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ
  - Համակարգչային գեղարվեստական նախագծում
  - Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
  - Սպասարկման կազմակերպում
- **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգ /12-ամյա կրթությամբ՝ 1 տարի տևողությամբ/.**
  - Խոհարարական գործ
  - Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում
  - Կարի արտադրության տեխնոլոգիա
  - Համակարգչային շահագործում
  - Գինեգործություն և հյութերի արտադրություն
- **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգ /9-ամյա կրթությամբ՝ 3 տարի տևողությամբ/.**
  - Խոհարարական գործ
  - Գինեգործություն և հյութերի արտադրություն
- **Կարճաժամկետ ուսուցում /2-ից մինչև 6 - ամսյա տևողությամբ՝**
  - Հասարակական սնունդ
  - Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում
  - Դիմահարդարում / կոսմետոլոգիա
  - Կարի արտադրության տեխնոլոգիա
  - Համակարգիչների շահագործում
  - Մատնահարդարում
  - Հաշվապահական հաշվառում ՀԾ և Excel ծրագրերի միջոցով

- Գինեգործություն և հյութերի արտադրություն
- Համակարգչային գեղարվեստական նախագծում
- Անգլերեն լեզվի գրավոր և բանավոր խոսք

**Աղյուսակ 2. Առկա բաժինների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար.**

| Բաժինների /Կուրսերի/ թիվը | 2019 - 2020 | 2020-2021 | 2021-2022 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Արհեստագործական | 4 | 7 | 5 | աճ, նվազում |
| Միջին մասնագիտական | 21 | 26 | 25 | աճ, նվազում |
| Ընդամենը | 25 | 33 | 30 | աճ, նվազում |

**Բաժինների փոփոխությունների դինամիկան**




Նախորդ ուսումնական տարվա համեմատ 2021-2022 ուստարում ԱՊՔ- ի միջին մասնագիտական և արհեստագործական կրթական համակարգերում բաժինների թիվը նվազել է տարբեր արտաքին բացասական գործոնների հետևանքով, որոնց թվում է նաև պատերազմի առաջացրած երկրում տիրող անորոշությունը։ Կուրսերի ընդհանուր թիվը նախորդ՝ 2020-2021 թվականի համեմատ նվազել է 3-ով։ Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգի /12-ամյա կրթությամբ՝ 1 տարի տևողությամբ/ <<Համակարգչային շահագործում>> ու <<Գինեգործություն և հյութերի արտադրություն>> բաժինները չեն ձևավորվել, սակայն դրանց տեղը լրացնում են 9-ամյա կրթությամբ՝ <<Հաշվողական տեխնիկայի և ավտոմա-

տացված համակարգերի ծրագրային ապահովում>> 4 տարի և <<Գինեգործություն և հյութերի արտադրություն>> 3 տարի տևողությամբ բաժինները: Յուրաքանչյուր տարի շատ մեծ է հատկապես 9-ամյա կրթության հենքով դիմորդների թիվը, սակայն ԱՊՔ-ի տնօրինությունը ելնում է ՀՀ ԿԳՄՍՆ հատկացված տեղերի տեսանկյունից, շենքային պայմանների ընձեռած հնարավորություններից, լիցենզավորված բաժիններից և այլն: 2021-2022 ուստարում միջին մասնագիտական կրթական համակարգի <<Դեղագործություն>> բաժնի համար լիցենզավորված տեղեր չենք պահանջել ԿԳՄՍՆ -ից , հետևաբար այդ բաժինը ևս չի ձևավորվել:

Ներկա ժամանակաշրջանում տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները պահանջում են պատրաստել միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցող մասնագետներ: ԱՊՔ-ն ունի միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր և տեղական աշխատաշուկայի համար պատրաստում է գործնական հմտություններ ունեցող միջին մասնագետներ: 2021-2022 ուստարում ընդունելությունը կրկին իրականացվել է առցանց: Դիմորդների հայտը և փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ընդունվել են dimord.emis.am կայքի միջոցով:

2021-2022 ուստարվա ԱՊՔ-ի միջին մասնագիտական կրթական համակարգում ԿԳՄՍՆ կողմից հատկացված տեղերի քանակը եղել է 345 տեղ, դիմել է 192 դիմորդ, և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգում հատկացված տեղերի քանակը՝ 100 տեղ, դիմել է 65 դիմորդ: Թափուր տեղերն առաջացել են հիմնականում 12 - ամյա կրթության հենքով բաժիններում:

Սա վկայում է ԱՊՔ-ի մեծ հեղինակությունը ծնողների շրջանում և դիմորդների հետաքրքրությունը միջին մասնագիտական և արհեստագործական կրթության նկատմամբ:

**Աղյուսակ 3. Ըստ բաժինների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ ուստարիների համար.**

<table>
<tr><th>Սովորողներիթիվը</th><th colspan="2">2019-2020 ուստարի</th><th colspan="2">2020-2021 ուստարի</th><th colspan="2">2021-2022 ուստարի</th><th>Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)</th></tr>
<tr><td rowspan="3">Արհեստագործական</td><td colspan="2">66</td><td colspan="2">71</td><td colspan="2">92</td><td rowspan="3">աճ</td></tr>
<tr><td>Վճ.</td><td>Վճ.</td><td>Վճ.</td><td>Անվճ.</td><td>Վճ.</td><td>Անվճ.</td></tr>
<tr><td>20</td><td>18</td><td>18</td><td>53</td><td>13</td><td>79</td></tr>
<tr><td rowspan="3">Միջին մասնագիտական</td><td colspan="2">340</td><td colspan="2">429</td><td colspan="2">476</td><td rowspan="3">աճ</td></tr>
<tr><td>Վճ.</td><td>Վճ.</td><td>Վճ.</td><td>Անվճ.</td><td>Վճ.</td><td>Անվճ.</td></tr>
<tr><td>23</td><td>120</td><td>120</td><td>309</td><td>193</td><td>283</td></tr>
<tr><td rowspan="3">Ընդամենը</td><td colspan="2">406</td><td colspan="2">500</td><td colspan="2">568</td><td rowspan="3">աճ</td></tr>
<tr><td>Վճ.</td><td>Վճ.</td><td>Վճ.</td><td>Անվճ.</td><td>Վճ.</td><td>Անվճ.</td></tr>
<tr><td>43</td><td>138</td><td>138</td><td>362</td><td>206</td><td>362</td></tr>
</table>

## Սովորողների փոփոխությունների դինամիկան




Ուսանողների կայուն հոսքը նկատելի է վերջին երեք տարիների ընթացքում, որն ԱՊՔ-ի ուժեղ կողմերից մեկն է: Բերված տվյալները վկայում են, որ տարեցտարի անշեղորեն աճում է ԱՊՔ-ի վարկանիշը, հետևաբար՝ այստեղ սովորել ցանկացողների թիվը:

2021-2022 թթ. ընդհանուր սովորողների թվի /568 ուսանող/ կազմում 83,8%-ը միջին մասնագիտական կրթական համակարգի ուսանողներն են, 16.1%-ը՝ արհեստագործական համակարգի ուսանողները: Սա փաստում է, որ աշակերտները հիմնական կրթություն ստանալուց հետո ձգտում են ստանալ միջին մասնագիտական կամ նախնական արհեստագործական կրթություն: 2021-2022 ուսումնական տարում ի համեմատ նախորդ 2020- 2021 ուստարվա սովորողների ընդհանուր թիվն ավելացել է 68-ով, առկա է դրական դինամիկա /աճը նկատվում է՝ միջին մասնագիտական կրթական համակարգում որոշ մասնագիտությունների գծով վճարովի տեղերի ավելացմամբ, իսկ արհեստագործական բաժիններում՝ անվճար տեղերի ավելացմամբ/: Սովորողների թիվը ընթացիկ և նախորդ տարիներին աճել է, պայմանավորված էր ՀՀ ԿԳՄՍՆ տրամադրած /ավելացրած/ տեղերի քանակով:

2021 - 2022 ուսումնական տարում վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների աճը ձևավորել է այս տարվա արտաբյուջեն 15640160 դրամով:

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար.

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020 - 2021 ուստարի | | | 2021 - 2022 ուստարի | | | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արհեստագործական | Միջին մասնագիտական | Σ | Արհեստագործական | Միջին մասնագիտական | Σ | |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 406 | 71 | 429 | 500 | 92 | 476 | 568 | աճ, աճ |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ տարվա համապատասխան ամսաթվի դրությամբ /01.06.2020 , 01.06.2021 01.06.2022/ | 387 | 64 | 393 | 457 | 81 | 439 | 520 | աճ, աճ |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 8 | 1 | 7 | 8 | 0 | 14 | 14 | անփոփոխ, աճ |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 27 | 8 | 46 | 54 | 12 | 27 | 39 | աճ, նվազում |

ԱՊՔ-ի նպատակն է՝ ապահովել կրթություն, որը հնարավորություն կտա ուսանողներին առավելագույնս դրսևորել իրենց ներուժը, միջին մնագիտական օղակներում: ԱՊՔ-ն իր առաքելության առաջնային դերակատարությունը տալիս է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը: ԱՊՔ-ի դիմորդների թիվը տարեցտարի ավելանում է, ինչն անմիջականորեն վկայում է քոլեջի հաջողությունների, մասնագիտական կրթության նկատ-

մամբ լուրջ վերաբերմունքի, որակյալ կրթության պահանջվածության մասին: ԱՊՔ-ից հեռացած սովորողների հիմնական պատճառը արտերկրներ մեկնելն է, անհարգելի բացակայություն-ների մեծ թիվը կամ ՀՀ ՊԲ- ում ծառայության մեկնելը:

**Աղյուսակ 5. Ընդհանուր տվյալներ դասախոսների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ ուս-տարիների համար.**

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Դասախոսների և վարպետների ընդհանուր թիվը | 38 | 47 | 52 | աճ, աճ |
| Դասախոսների և վարպետների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 700 | 600 | 690 | նվազում, աճ |

**Դասախոսների/վարպետների/ փոփոխությունների դինամիկան**




Դասախոսների և վարպետների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը

Դասախոսների և վարպետների ընդհանուր թիվը

2020-2021 ուստարում վարպետների միջին ծանրաբեռնվածության ցուցանիշը նախորդ՝ 2019-2020թթ.–ի համեմատ նվազել է, կապված արհեստագործական որոշ բաժիններում ուսա-նողների թվի պակասով, սակայն 2021-2022 թվականին գրանցվել է աճ:

ԱՊՔ-ում աշխատում է 52 դասախոս և վարպետ, վարչական կազմի 12 անդամներ դասա-վանդում են: Վերջին տարիների ընթացքում դասախոսների թվաքանակն ավելացել է: Նորմաս-նագիտությունների կազմավորման հետ միասին ԱՊՔ-ում նոր դասախոսների կարիք է զգաց-վում: Թափուր տեղերի համար համապատասխան հայտարարություն է տրվում, ապա՝ կազմա-կերպվում մրցույթ՝ ըստ հաստատված կարգի, որը նպաստում է կադրերի ընտրության արդյու-նավետությանը: Ըստ ԱՊՔ-ի քաղաքականության՝ աշխատանքի են ընդունվում միայն այն մասնագետները, որոնք բավարարում են կոնկրետ առարկայի կամ մոդուլի դասախոսին ներ-կայացվող պահանջները:

ԱՊՔ-ն կարևորում է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համապատասխա-նությունը քոլեջի առաքելությանը, կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավո-

րումներին և դասախոսական կազմի սերնդափոխությանը, անընդհատ կատարելագործման գործընթացները, որն էլ միտված է դասավանդման և ուսումնառության բարելավմանը:

**Աղյուսակ 6. Տվյալներ դասախոսների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար.**

| Դասախոսների թիվը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 10 | 16 | 19 | աճ, աճ |
| 31-ից 40 տարեկան | 7 | 9 | 16 | աճ ,աճ |
| 41-ից 50 տարեկան | 11 | 12 | 5 | աճ, նվազում |
| 51-ից 55 տարեկան | 1 | 1 | 3 | հաստատուն , աճ |
| 56 տարեկան և ավելի | 9 | 9 | 9 | հաստատուն |

**Սովորողների փոփոխությունների դինամիկան**




2021-2022 ուսումնական տարում ԱՊՔ-ի հիմնական մանկավարժական կազմի 37%-ը եղել է մինչև 30 տարեկան, ինչը վկայում է մանկավարժական կադրերով ապագայում ևս ապահովված լինելու գրեթե երաշխավորվածության մասին:

Վերջին տարիներին անփոփոխ են մնացել 56 տարեկան և ավելի տարիքային խմբերը, փոխարենը ավելացել են մինչև 30 տարեկան, 31-ից 40 տարեկան մասնագետների թիվը: Նկատվել է դրական դինամիկա այս տարիքային խմբերի մասնագետների քանակի մասով, ինչը պայմանավորված է թափուր տեղերի համար կայացած մրցույթներում առավելապես նրանց ակտիվ մասնակցությամբ: 41-ից 50 տարեկան մասնագետների թիվ տարեց տարի նվազել է:

Աշխատակիցների կազմի ընդհանուր երիտասարդացման միտումը ևս նպաստում է օտար լեզուների իմացության բարձրացմանը: ԱՊՔ-ն իր առաքելության և նպատակների իրականացման համար ունի կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական գործունեության նկատմամբ որոշակիորեն հստակեցված պահանջներ, մասնագիտական ներուժ, երիտասարդ անձնակազմ, երիտասարդ կադրերի առաջխաղացման հստակ ուղղվածություն: Ընտրվում են այնպիսի մասնագետներ, որոնք կարող են իրագործել մտավոր, ստեղծագործական ներուժը արագ փոխվող տեղեկատվական պայմաններում, ունեն վերլուծական ու ճկուն մտածողություն: ԱՊՔ-ն գիտակցում է, որ երիտասարդ մասնագետը օժանդակության կարիք ունի, և այստեղ ստեղծված են բոլոր պայմաններն ու բարենպաստ մթնոլորտ դասախոսի զարգացման ու կատարելագործման համար:

Դասախոսական անձնակազմը մասնակցում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող տարեկան պլանային վերապատրաստումներին, ինչը նպաստում է դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների առաջընթացին: ԱՊՔ-ում դասախոսների, վարպետների մասնագիտական որակների գնահատումն իրականացվում է բաժնի վարիչների, փոր-ձառու դասախոսների դասալսումների վերլուծությունների և ուսանողների կարողությունները ուսումնասիրելու միջոցով:

2022թ. հունվարի 10-ի № 10 գրության համաձայն Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն է ներկայացվել ԱՊՔ-ի 2 թողարկվող բաժններից 12 աշխատակիցների՝ /դասախոսներ, վարպետներ / տվյալներ, վերապատրաստման նպատակով:

Ակնկալվող արդյունքը եղել է մոդուլային ուսուցման նոր մեթոդների կիրառումը:

**Աղյուսակ 7. Տվյալներ հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ.**

| Ազգանուն, Անուն, Հայրանուն | Պաշտոնը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածի մասին | ԱՊՔ-ում աշխատելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները, կատարած աշխատանքները |
|---|---|---|---|---|
| Գասպարյան Էլլա Գագիկի | Տնօրեն | 10 | 22 | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ շնորհակալագիր «Ռազմավարությունների կիրառում մեծ քանակի (G20) խմբի կադրերի մասն.պատ. ռազմավար. կիրառ. մասնագիտ. ուս. հաստ. կառավարում» սերտիֆիկատ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հայկյան Սուսան Ջավենի | Տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով | 5 | 27 | Արարատի քաղաքապետարանի կողմից՝ պատվոգիր, Արարատի մարզպետարանի կողմից՝ պատվոգիր |
| Հակոբյան Ազատ Ղազարի | Տնօրենի տեղակալ դաստ. գծով | 10 | 35 | Տեխնիկական գիտությունների թեկնածու,Արարատ քաղաքի ավագանու անդամ, ՀՀ ԿԳՄՍՆ՝ ԵՊՀ շնորհակալագիր, ՀՀ ԿԳՆ պատվոգիր |
| Եղիազարյան Տիգրան Անդրանիկի | Տնօրենի տեղակալ վարչ. տնտես.գծով | 27 | 44 | Արարատի քաղաքապետարանի կողմից՝ հավաստագիր, հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 66-րդ տարեդարձի առթիվ |
| Մարգարյան Մարինե Ջավենի | Տնօրենի օգնական, դասախոս | 3 | 28 | ՀՀ ԿԳՄՍՆ «Տարվա լավագույն դասախոս», Արարատի քաղաքապետարանի կողմից պատվոգիր՝ «Ավագ դասա-խոս» - ի կոչման համար |
| Սարգսյան Կարինե Աշոտի | Ներքին որակի ապահովման պատասխա-նատու | 3 | 6 | Ոսկե մեդալակիր |
| Մարտիրոսյան Լիլիկ Պարույրի | Ուս. մասի վարիչ միջին. մասնագիտ. գծով | 3 | 4 | ՀՀ ԿԳՆ ԿԱԻ՝ հավաստագիր, ՀՀ ԿԳՆ ՀՊՄՀ՝ հավաստագիր |
| Գրիգորյան Նարինե Մանուկի | Ուս. մասի վարիչ նախն. արհեստ. գծով | 3 | 4 | ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից՝ վկայական |
| Համբարձումյան Լիլիթ Արթուրի | Պրակտիկայի բաժնի վարիչ | 2 | 6 | |
| Սահակյան Ալինա Ալեքսեյի | Կարիերայի կենտրոնի խորհրդատու | 5 | 9 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Այվազյան Ռուբեն Զոհրապի | Լեզվամանկա-վարժ. բաժնի վարիչ | 3 | 4 | Միջազգային գիտական հոդվածների հեղինակ |
| Տերտերյան Սերինե Սամվելի | Տնտեսագիտ. բաժնի վարիչ | 3 | 5 | |
| Հարությունյան Նվարդ Արամայիսի | Հանրակրթ. բաժնի վարիչ | 3 | 5 | |
| Խանեսյան Տաթևիկ Սուրիկի | Գրադարանա-վար | 2 | 4 | |
| Այվազյան Դիաննա Զոհրապի | Մեթոդիստ | 1 | 1 | |
| ՀովհաննիսյանԱսյա Գագիկի | Հոգեբան - մանկավարժ | 2 | 2 | |
| Բաբայան Տիգրան Բաբկենի | Զինղեկ, ՔՊ շտաբի պետ | 9 | 9 | |
| Հովհաննիսյան Սերոժ Հակոբի | Հաշվապահ | 5 | 5 | |

Տնօրենի բոլոր տեղակալներն ունեն կոնկրետ պարտականություններ և լիազորություն-ներ, պատասխանատու են աշխատանքի որոշակի մասի համար, բայց աշխատում են որպես միասնական թիմ՝ կառավարման հիերարխիկ կապերով ու համագործակցության, փոխադարձ վստահության սկզբունքներով: Բոլոր ստորաբաժանումները կազմել են տարեկան զարգացման ծրագրեր, կարճաժամկետ պլաններ, ներկայացրել համապատասխան կատարողականի հաշ-վետվություններ:

Աղյուսակ 8. Տվյալներ հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ.

| Ազգանուն Անուն Հայրանուն | Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Արայիկ Գրիգորյան | «Ավշար ալկո» ՍՊԸ - ի խորհրդի նախագահ, Խորհրդի նախագահ | բարձրագույն | 2018 | |
| Յուլյանա Միրզախանյան | ՀՀ ԿԳՄՍՆ աշխատակազմի հասարակ. հետ կապերի և տեղեկ. վարչ. առաջատար մասնագետ | բարձրագույն | 2018 | |
| Սուսան Հայկյան | Դասախոսական կազմի ներկ., խորհրդի քարտուղար | բարձրագույն | 2018 | |
| Գոհար Թամրազյան | Դասախոսական կազմի ներկայացուցիչ | բարձրագույն | 2018 | |
| Լիդա Գրիգորյան | Ուսանողական կազմի ներկայացուցիչ | ուսանող | 2018 | |
| Սամվել Գալստյան | «ՀԲԲ» ՓԲԸ կառավարիչ, գործատուների ներկայացուցիչ | բարձրագույն | 2018 | |
| Վաչիկ Աղազարյան | ԱՏՁԿ –ի տնօրեն, զբաղված. ծառայութ. ներկայացուցիչ | բարձրագույն | 2018 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Նելլի Մելքոնյան | Ուսանողական կազմի ներկայացուցիչ | ուսանող | 2020 | |
| Մարիամ Ալթունյան | Ուսանողական կազմի ներկայացուցիչ | ուսանող | 2020 | |
| Գոհար Հովհաննիսյան | Արարատ քաղաքի 3 հիմն. դպրոցի տնօրեն, խորհրդի նախագահի տեղակալ | բարձրագույն | 2018 | |
| Գարեգին Գարեգինյան | Կրթության և գիտության ախատողների արհեստ. կազմ. Արարատի տարածք. միության նախագահ, արհմիության ներկայացուցիչ | բարձրագույն | 2018 | |

ԱՊՔ-ի կառավարման խորհուրդն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և ԱՊՔ-ի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունները, աշխատում է արդյունավետ՝ նպաստելով կրթական գործընթացի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Կառավարման խորհրդի աշխատանքները կազմակերպվել են 2021-2022 ուսումնական տարում հաստատված «Կառավարման խորհրդի աշխատակարգ»-ին համապատասխան:

Հրավիրվել է 7 նիստ: Բոլոր նիստերն արձանագրված են:

## Մաս 2.

## ԱՊՔ-ի սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

### 2.1 ԱՊՔ-ի շենքի և տարածքի անվտանգ շահագործումը.

1. ԱՊՔ-ի տարածքը ցանկապատված է և անվտանգ ուսանողների ազատ տեղաշարժման համար: Կա ԱՊՔ-ի մուտքի և բակի տեսահսկման համակարգ: ԱՊՔ-ի մուտքը հսկվում է օրվա հերթապահ պահակի կողմից: Առանց կուրսղեկի և տնօրենի թույլտվության, ծնողի գիտության ուսանողը բոլոր դասերի ավարտից առաջ ԱՊՔ-ից դուրս գալ չի կարող: Դասերի ընթացքում սահմանված է հերթապահություն միջանցքներում:
2. ԱՊՔ-ի տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուն մոտ, բայց շրջակայքում կան բավարար անվտանգ անցումներ:
3. ԱՊՔ-ն ունի բացվող մեծ դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին (հիմք՝ ԱՊՔ –ի պլան հատակագիծը:
4. Թեև ԱՊՔ-ի տարածքում կրծողներ, վտանգավոր միջատներ, թափառող կենդանիներ չկան, այնուամենայնիվ, պարբերաբար իրականացվում են միջոցառումներ դրանց դեմ:
5. ԱՊՔ-ն մշտապես հետևում է տարածքի մաքրությանը. այն պարտադիր կերպով մաքրվում է ամեն օր: Բակում տեղադրված են աղբարկղեր: Աղբահանությունը նույնպես կազմակերպված է ըստ կարգի: Լաբորատորիայում վտանգավոր նյութեր չեն օգտագործվում, իսկ օգտագործվող այրվող և այլ նյութերի թափոնները կանոնավորապես հավաքվում են աղբարկղերում և դուրս բերվում ԱՊՔ-ի տարածքից:

ԱՊՔ-ն խստագույնս պահպանում է կորոնավիրուսային հիվանդության /COVID -19 / տարածման կանխարգելման անվտանգության կանոնները՝ առաջնորդվելով ՀՀառողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Անհատական պաշտ-պանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №23-Ն հրամանով և 2020 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության /COVID-19 / տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ № 3.1.0-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» № 17-հրամանի № 1 հավելվածով:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի 2021 թ, հոկտեմբերի 10-ի №02/10.1/24350-2021 գրությունը՝ 2021թ-ի հոկտեմբերի 26-ից ուսումնական գործընթացը 2 շաբաթով կազմակերպվել է հեռավար:

### 2.2 ԱՊՔ-ի շենքի և դրա շահագործման անվտանգությունը նկարագրող չափանիշները

ԱՊՔ-ում պահպանված են ուսանողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայությունները, մասնավորապես.

❖ ԱՊՔ-ի կրթական գործընթացը կազմակերպվում է մեկ մասնաշենքում, որն ունի միջոցառումների կազմակերպման համար նախատեսված դահլիճ, մարզադահլիճ, գրադա-

րան, համակարգչային կաբինետներ, նորագույն տեխնիկայով հագեցած ռոբոտատեխնիկայի «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, բուժսենյակ, սննդի ընդունման կետ, ուսուցչանոց, առարկայական 23 լսարաններ՝ զննական նյութերով, նախնական զինվորական պատրաստության կաբինետ, գինեգործության և հյութերի արտադրության համար նախատեսված՝ արդի պահանջներին համապատասխանող լաբորատորիա: Չնայած ԱՊՔ-ի շենքում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ սակայն դեռևս չվերանորոգված լսրաններ կան և լուրջ ներդրումներ են պահանջում:

- ԱՊՔ-ն ունի նաև ծիրանի այգի, աչքին հաճելի մի կանաչ միջավայր, որի բարիքներից օգտվում են թե՛ քոլեջի աշխատողները, թե՛ ուսանողները: ԱՊՔ-ի ներքին հարդարանքը տնօրինության մշտական ուշադրության կենտրոնում է, և ստեղծվում են բոլոր հնարավոր պայմանները դասախոսների և ուսանողների համար:
- ԱՊՔ-ում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայությունները.

1. ԱՊՔ-ի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին: Այն քարե շենք է՝ բարվոք վիճակում, ուժեղ քամիների, սողանքների, հրդեհների, խոնավության նկատմամբ՝ կայուն: Երկրաշարժերի վտանգի հետ կապված փորձաքննություն կատարված չէ:
2. Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային 3 վթարային ելքեր, որոնց բանալիները գտնվում են պահակային ծառայության կետում, արտակարգ իրավիճակներումկարող են բացվել և ապահովել ԱՊՔ-ի բոլոր ուսանողների և անձնակազմի ազատ ելքը:
3. ԱՊՔ-ն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համա-կարգով (հեռախոսներ, ռադիոհանգույց, բարձրախոսներ): Այն մշտապես ստուգվում է:
4. ԱՊՔ-ի միայն շքամուտքն ունի թեք հարթակ՝ հարմարեցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին և նրանց հետ դասապրոցեսի անցկացման համար օգտագործվում են առաջին հարկի լսարանները:
5. ԱՊՔ-ում պահպանվում են հակահրդեհային անվտանգության կանոնները: Պարբերաբար ստուգվում են էլեկտրահաղորդալարերի ցանցը, էլեկտրական սարքավորումները: ԱՊՔ-ի աշխատանքի ավարտից հետո հոսանքից անջատվում են էլեկտրական բոլոր սարքերը: ԱՊՔ-ի ղեկավարությունն իր ուշադրության կենտրոնում է պահում հակահրդեհային անվտանգության պահանջների կատարումը: ԱՊՔ-ում չկա հրշեջ-ծորակ, սակայն յուրաքանչյուր հարկում կան ջրի ծորակներ: Հակահրդեհային անվտանգության լրակազմից կան միայն 6 կրակմարիչներ, որոնք սարքին և պատրաստ վիճակում են, տանիքը պատված է հրակայուն նյութերով:
6. ԱՊՔ-ում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:
7. Բոլոր լսարաններում և աշխատատեղերում համակարգչային սարքավորումները ամուր տեղադրված են և ամրացված աշխատատեղերին: Դրանց շահագործման համար նշանակված են պատասխանատուներ:

8. Անիվներով տեղաշարժվող ծանր իրեր չկան:
9. Բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը:
10. ԱՊՔ-ի միջանցքների հատակները սայթաքուն չեն, ուղեգորգեր չկան:
11. Ստորին հարկերի պատուհաններն ունեն մետաղյա վանդակաճաղեր, որոնք շարժական չեն:
12. Կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ա-մուր և բարվոք վիճակում է: Կահույքի վիճակը մշտապես վերահսկվում է պատասխա-նատու անձանց կողմից, թերությունններն անհապաղ վերացվում են, անհրաժեշտության դեպքում նաև փոխվում նորով:
13. ԱՊՔ-ում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան՝ համա-պատասխան գունային ցուցասլաքներով, որոնք փակցված են ԱՊՔ-ի նախասրահում, բոլոր հարկերի միջանցքներում, բոլոր լսարաններում, ինչպես նաև օժանդակ–սպասար-կող անձնակազմի սենյակներում:
14. ԱՊՔ-ի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրե-րով:

**2.3 ԱՊՔ - ի նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշները և չափանիշները**

ԱՊՔ-ն պահպանում է իր նախագծային հզորությունը:

- ԱՊՔ-ում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության նախագծային հզորությանը և հաստատության՝ լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:
- Լսարաններում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատաս-խանում է նախագծային և սահմանված նորմերին: Դիտարկումնիրականացվում է յուրա-քանչյուր տարի՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:
- ԱՊՔ-ի սովորողները «ֆիզկուլտուրա» առարկայի կամ մոդուլի ուսումնական դասըն-թացներն անց են կացնում հաստատության մարզադահլիճում:
- Մարզադահլիճն ունի  ներքին հարդարման մեծ աշխատանքներ: Կա նաև մարզական անհրաժեշտ գույքի պահանջ:

Աղյուսակ 9. Տվյալներ յուրաքանչյուր լսարանում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ.

| Լսարանի համարը | Լսարանի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, Π-աձև, խառը) | Սեղան-նստարանների թիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները |
|---|---|---|---|---|
| №**101** | 35.2 | շարքերով | 7 սեղ. 16 նստ. | 0,5 մ |
| №**102** | 37.3 | Π- աձև | 5 սեղ. 17 նստ. | 2 մ |
| №**104** | 37.2 | շարքերով | 17 սեղ. 20 նստ. | 3 մ |
| №**105** | 37.3 | շարքերով | 12 սեղ. 20 նստ. | 2 մ |
| №**107** | 49.2 | շարքերով | 5 սեղ. 16նստ. | 1 մ |
| №**203** | 56.3 | շարքերով | 20 սեղ. 38 նստ. | 80 սմ |
| №**204** | 38.7 | շարքերով | 13 սեղ. 25 նստ. | 1 մ |
| №**206** | 51 | շարքերով | 18 սեղ. 35նստ. | 80 սմ |
| №**207** | 47.4 | շարքերով | 16 սեղ. 31 նստ. | 80 սմ |
| №**208** | 42.2 | շարքերով | 16 սեղ. 31 նստ. | 80 սմ |
| №**209** | 41 | շարքերով | 16 սեղ. 31 նստ. | 80 սմ |
| №**210** | 38.2 | Π - աձև | 11 սեղ. 20 նստ. | 4 մ |
| №**300** | 37,5 | շարքերով | 14 սեղ. 28 նստ. | 80 սմ |
| №**301** | 39.2 | շարքերով | 14 սեղ. 28 նստ. | 80 սմ |
| №**303** | 38 | շարքերով | 14 սեղ. 28 նստ. | 80 սմ |
| №**304** | 37.8 | շարքերով | 15 սեղ. 30 նստ. | 80 սմ |
| №**305** | 38.3 | շարքերով | 15 սեղ. 30նստ. | 80 սմ |
| №**306** | 39 | շարքերով | 14 սեղ. 28 նստ. | 80 սմ |
| №**308** | 41.3 | շարքերով | 12 սեղ. 24 նստ. | 80 սմ |
| №**309** | 41.2 | շարքերով | 15 սեղ. 20 նստ. | 80 սմ |
| №**310** | 39.3 | շարքերով | 14 սեղ. 28 նստ. | 80 սմ |
| №**312** | 38.2 | շարքերով | 14 սեղ. 28 նստ. | 80 սմ |
| №**313** | 38.4 | շարքերով | 15 սեղ. 30 նստ. | 80 սմ |

Լսարաններում նստարանների շարքային դասավորվածությունը հնարավորություն է տալիս ուսանողներին ուղղահայաց ձևով տեսնել գրատախտակը և դասախոսին: Բացի այդ, ուսանողները անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունեն առանց միմյանց խանգարելու ազատ տեղաշարժվել լսարանում: Խմբային աշխատանքների ժամանակ դասախոսն առանց դժվարության փոխում է նստարանների դասավորությունը՝ ստանալով դասին հարմար աշխատատեղեր: Սքայ (SKYE) ակումբում և գինեգործության լսարաններում տեղադրված են նաև կլոր սեղաններ՝ դասերը ինտերակտիվ մեթոդներով և խաղերի կիրառմամբ անցկացնելու համար:

Նոր կորոնավիրուսային հիվանդության պայմաններում ԱՊՔ-ի գործունեությունը վերսկսելու նպատակով 2021-2022 ուսումնական տարվա սկզբին լսարաններում կահավորանքը համապատասխանեցվել է ՀՀ ԿԳՄՍՆ և ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված ուղեցույցով սահմանված պահանջներին:

Բոլոր կուրսերի մոդուլների ամփոփումը և ստուգարքների հանձնումը անցկացվել է քոլեջում՝ խստագույնս պահպանելով սանիտարական կանոնները:

**Աղյուսակ 10. Տվյալներ յուրաքանչյուր լսարանում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ:**

*Դիտարկման ամսաթիվ՝ 27.08.2021 թ.*

| Լսարանի համարը | Լսարանի մակերեսը (քմ) | Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ) | Նորմայից ավել կամ պակաս մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| №**101** | 35.2 | 2.5 | Նորմայից ավել |
| №**102** | 37.3 | 3.7 | Նորմայից ավել |
| №**104** | 37.2 | 2.5 | Նորմայից ավել |
| №**105** | 37.3 | 2.5 | Նորմայից ավել |
| №**107** | 49.2 | 3.3 | Նորմայից ավել |
| №**203** | 56.3 | 2.8 | Նորմայից ավել |
| №**204** | 38.7 | 2.05 | Նորմայի շրջանակ. |
| №**206** | 51 | 2.55 | Նորմայի շրջանակ. |
| №**207** | 47.4 | 2.4 | Նորմայի շրջանակ. |
| №**208** | 42.2 | 2.11 | Նորմայի շրջանակ. |
| №**209** | 41 | 2.05 | Նորմայի շրջանակ. |
| №**210** | 38.2 | 2.01 | Նորմայի շրջանակ. |
| №**300** | 37,5 | 2.0 | Նորմայի շրջանակ. |
| №**301** | 39.2 | 2.01 | Նորմայի շրջանակ. |

| | | | |
|---|---|---|---|
| №**303** | 38 | 1.95 | Նորմայի շրջանակ. |
| №**304** | 37.8 | 2.3 | Նորմայի շրջանակ. |
| №**305** | 38.3 | 2.4 | Նորմայի շրջանակ. |
| №**306** | 39 | 2.4 | Նորմայի շրջանակ. |
| №**308** | 41.3 | 2.7 | Նորմայից ավել |
| №**309** | 41.2 | 2.7 | Նորմայից ավել |
| №**310** | 39.3 | 2.8 | Նորմայից ավել |
| №**312** | 38.2 | 1.96 | Նորմայի շրջանակ. |
| №**313** | 38.4 | 2.4 | Նորմայի շրջանակ. |

Յուրաքանչյուր ուսանողին լսարանի կտրվածքով բաժին է ընկնում 1.95 -3.7 քառ. մ մակերես: Բոլոր լսարաններում շարքերի միջև հեռավորությունը համապատասխանում է պահանջվող չափանիշներին՝ 50-80 սմ: Առաջին սեղան-նստարանից մինչև գրատախտակը հեռավորությունը 2,0-2,4 /2,4-2,7/մ է: Սեղան-նստարանների միջև ընդհանուր առմամբ 10-30 սմ տարածություն կա: Առանձին կտորներով սեղան-նստարանների համար բոլոր լսարաններում բավականաչափ տեղ կա. աթոռները դրված են սեղանից բավարար հեռավորության վրա: Լսարաններում մեկ սովորողին ընկնող մակերեսը, որպես կանոն, նորմայի սահմաններում է: Սեղան-նստարանները հիմնականում դասավորված են երեք շարքով:

Բոլոր լսարաններում կա 1-3 լուսամուտ: Բնական լույսն ընկնում է ձախ կողմից: Լսարանները ամեն դասից հետո օդափոխվում են և ախտահանիչ լուծույթով /«Պերոքսիդ 0,25%» / ախտահանվում:

## 2.4 ԱՊՔ - ի անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ

ԱՊՔ-ն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների մոտ ձևավորելու անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններ ու հմտություններ.

1. ԱՊՔ-ի աշխատակազմը, ուսանողները և սպասարկող օժանդակ անձնակազմը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին ծանոթացել են համապատասխանաբար «ՆԶՊ» և «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկաների ծրագրերի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 22.01.2015թ.
   № 46 - Ն որոշման դրույթների շրջանակներում (ուսումնավարժանք, դասախոսություններ, սեմինարներ, օբյեկտային ուսումնավարժանքներ՝ ՀՀ ԱԻՆ Արարատի ՄՓՎ ՃԿԿ -ի հետ համատեղ և այլն):
2. ԱՊՔ-ի անձնակազմը և սովորողները տեղեկացված են ԱՊՔ-ի առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին:

**Աղյուսակ 11. Տվյալներ արտակարգ իրավիճակներում քոլեջի անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին .**

| № | Չափանիշը | Կատարել նշում համապատասխան և գույքի փաստաթղթերի առկայության մասին (փաստաթղթերի անվանումը, առկա գույքը) արձանագրել իրավիճակը: |
|---|---|---|
| 1. | Քոլեջի աշխատակազմը և ուսանողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: | ՔՊ պլան, քոլեջի ՔՊ կազմավորում (նրա խմբերի ցուցակները) էլեկտրական վահանակ, հակազազեր, կրակմարիչներ, ռադիոհանգույց: Քոլեջի անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: |
| 2. | Քոլեջի աշխատակազմը և ուսանողները տեղեկացվածեն հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, տարհանման պլան, կրակմարիչներ) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին: | Ուսումնավարժական պարապմունքների անցկացման օրացուցային պլան, քոլեջի ՔՊ շտաբի պետի աշխատանքյին պլան, տարհանմանպլան ուղեցույցներ: Քոլեջի աշխատակազմը և ուսանողները տիրապետում են անվտանգության միջոցների օգտագործման կանոններին: |

Ուսանողների և դասախոսների տեղեկացվածության տոկոսը  բարձրացնելու նպատակով ուստարվա ընթացքում կազմակերպվում են միջոցառումներ:

Կազմակերպվող սեմինար-դասընթացների ժամանակ ՀՀ ԱԻՆ Արարատի ՄՓՎՃԿԿ ներկայացուցիչները, ինչպես նաև ԱՊՔ-ի ՔՊ շտաբի պետը, ծանոթացնում են աշխատակազմին և ուսանողներին անվտանգության կանոններին, առկա միջոցներին, այնուհետև հարցումների միջոցով պարզում են դասընթացների յուրացման արդյունքները, որոնք, որպես կանոն, դրականեն: Նպատակներն են. ԱՊՔ-ի անձնակազմի և ուսանողների մոտ անվտանգության բնագավա-ռում տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորումը և կատարելագոր-ծումը, ինչպես նաև վերջիններիս արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ստու-գումը:

Ղեկավարվելով ՀՀ ՔՊ օրենքով (05.03.2002թ. 4-րդ գլուխ, 9-րդ հոդված), ինչպես նաև ՀՀ կառավարության (08.12.2005թ. ՀՕ-7-Ն) որոշման դրույթներով՝ ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի պետական քոլեջ ՊՈԱԿ-ում կազմակերպվում են ՔՊ միջոցառումներ, հաստատվում և գործողության մեջ են դրվում ՔՊ պլանները, ինչպես նաև իրականացվում է դրանց վերահսկողությունը, կատարելագործվում է քոլեջի ՔՊ ղեկավար կազմի և կազմավորման խմբերի ունակությունները՝ պլանով նախատեսված ԱԻ ուսումնավարժական տագնապների ժամանակ տարհանման միջոցառումները ճիշտ կայացնելու ուղղությամբ:

**Աղյուսակ 12. ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ-ի շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլան.**

| ՀՀ | Միջոցառումների անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխանատու կատարողը |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| Կազմակերպչական միջոցառումներ | | | |
| 1 | ՇՈՒ-ի նախապատրաստման և օրացուցային պլանի մշակում:<br>ՇՈՒ-ի անցկացման պլանի մշակում: | մինչև 08.04.2022թ. | Քոլեջի ՔՊ և ԱԻ շտաբի պետ |
| ՇՈՒ-ի անցկացման փաստաթղթերի մշակումը | | | |
| 2 | Ուսումնասիրել տարածքը ՇՈՒ անցկացնելու համար:<br>Մշակել Քոլեջի ՔՊ և ԱԻ պետի որոշումը ՇՈՒ անցկացնելու համար: | մինչև 23.05.2022թ. | Քոլեջի ՔՊ և ԱԻ շտաբի պետ |
| Քոլեջի նախապատրաստումը ուսումնավարժությունը | | | |
| 3 | Հատուկ տակտիկական վարժանքների անցկացում մասնակցող հանձնաժողովների անձնակազմների հետ: | 25.10.2022թ. | Քոլեջի ՔՊ և ԱԻ շտաբի պետ |
| 4 | Հրդեհի դեպքում ուսումնական հաստատությունից անձնակազմի տարհանում: | անհապաղ | Քոլեջի ՔՊ և ԱԻ շտաբի պետ |

Աղետների ռիսկի նվազեցման, տարաբնույթ արտակարգ իրավիճակներում արագ և արդյունավետ արձագանքման պատրաստվածության բարձրացման նպատակով՝ ԿԳՄՍՆնախարարի 13.05.2021թ. №29-Լ և ԱԻՆ 13.04.2021թ. №418-Լ համատեղ հրամանի, ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, ըստ մեթոդական ուղեցույցի, մշակվել է ԱՌԿ/աղետների ռիսկի կառավարում/ պլան և ԱՌԿ խորհուրդ, որը ներկայացված է Արարատի ՄՓՎ/ մարզային փրկարար վարչություն/ համաձայնեցման:

Ըստ տնօրենի 27.07.2021թ. №Տ/104/Ա հրամանի՝ ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «ա» կետով, նշանակվել է աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը, աշխատակարգն ու գործառույթները և ոլորտային խմբերի ցանկը:

**ՀՀ ԿԳՄՍ ԱՊՔ-ի**
**Աղետների ռիսկի կառավարման /այսուհետ՝ ԱՌԿ/ խորհրդի կազմը.**

1. ԱՌԿ խորհրդի ղեկավար կազմը՝
ա. խորհրդի ղեկավար - Էլլա Գասպարյան
բ. խորհրդի ղեկավարի տեղակալ – տարհանման և պատսպարման կազմակերպման ղեկավար պատասխանատու – Սուսան Հայկյան
գ. խորհրդի քարտուղար - Հասմիկ Չերչիկյան

2. ԱՌԿ ոլորտային պատասխանատուներ՝
ա. ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատու՝ Կարինե Սարգսյան /կրթության որակի պատասխանատու, դասախոս/
բ. հրդեհային անվտանգության պատասխանատու՝ Օրդաքյան Խաչիկ /դասախոս/գ. առաջին օգնության պատասխանատու՝ Մուրադյան Արևիկ /բուժքույր/
դ. առաջին հոգեբանական աջակցության պատասխանատու՝ Ղազարյան Այսա /հոգեբան/
ե. հաշմանդամություն ունեցող ուսանողների հարցերով պատասխանատու՝ Այվազյան Ռուբեն
/լեզվամանկավարժական բաժնի վարիչ/

3. ԱՌԿ խորհրդի կազմը՝
ա. Մարտիրոսյան Լիլիկ՝ /ուս. մասի միջին մասնագիտական բաժնի վարիչ, դասախոս/
բ. Գրիգորյան Նարինե՝ /նախնական /արհ./ մասնագիտական բաժնի վարիչ, դասախոս/
գ. Հակոբյան Ազատ՝ /տնօրենի տեղակալ կազմակերպադաստիարակչական աշխ. գծով/
դ. Առաքելյան Հովսեփ՝ /զինղեկ, ՔՊ շտաբի պետ/
ե. Ալթունյան Գոհար՝ /ուսանողական խորհրդի նախագահ/

**Ոլորտային խմբերի կազմը.**

1. Տարհանման և պատսպարման խմբի անդամներ
ա. Գևորգյան Տիգրան /դասախոս/
բ. Վարդանյան Գոհարիկ /դասախոս
գ. Թովմասյան Լիդա /դասախոս/
դ. Սարոյան Կարինե /ուսանող/
ե. Հովհաննիսյան Նարեկ /ուսանող/
ա. Երիցյան Վահե /ուսանող/

2. Ազդարարման և տեղեկատվության փոխանակման խմբի անդամներ
ա. Գասպարյան Նարե /դասախոս/բ. Գևորգյան Մարիամ /դասախոս/
գ. Խանեսյան Տաթևիկ /գրադարանավար/
դ. Եղիազարյան Հայկ /ուսանող/
ե. Մելիքյան Սուրեն /ուսանող/
զ. Ֆահրադյան Սոֆյա /ուսանող/

3. Հրդեհային անվտանգության խմբի անդամներ
ա. Մուսախանյան Քերոբ /դասախոս/
բ. Խաչատրայն Հրաչյա /դասախոս/
գ. Հովհաննիսյան Տաթևիկ /դասախոս/
դ. Բազիկյան Տիգրան /ուսանող/
ե. Բազիկյան Դավիթ /ուսանող/
զ. Գաբրիելյան Վահագն /ուսանող/

4. Առաջին օգնության խմբի անդամներ՝
ա. Հարությունյան  Թեհմինե /վարպետ/
բ. Գրիգորյան Նելլի /վարպետ/
գ. Խաչատրյան Մարինե /դասախոս/
դ. Բաբայան Սիրան /ուսանող/
ե. Թորոսյան Սենիկ /ուսանող/
զ. Նազոյան Սարգիս /ուսանող/

5. Առաջին հոգեբանական աջակցության խմբի անդամներ
ա. Համբարձումյան Լիլիթ /դասախոս/
բ. Սահակյան Ալինա /Կարիերայի կենտրոնի խորհրդատու – դասախոս/
գ. Մկրտչյան Անահիտ /դասախոս/
դ. Բաղդասարյան Լարիսա /ուսանող/ե. Ղազարյան Աշոտ /ուսանող/
զ. Ռոստոմյան Ռաֆայել /ուսանող/

6. Հաշմանդամություն ունեցող ուսանողների հարցերով խմբի անդամներ
ա. Վարդազարյան Ռուզաննա /դասախոս/բ. Սուսուևյան Շուշան /դասախոս/
գ. Դեմիրչյան Արմինե /դասախոս/դ. Եղիկյան Մարինե /ուսանող/
ե. Գաբրիելյան Մենուա /ուսանող/զ. Կիրակոսյան Խորեն /ուսանող/

**Խոշոր աղետների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումներին աջակցություն ցուցաբերող մասնագիտական խմբի կազմը**
ա. Ղանդիլայն Սիրարփի /դասախոս / խմբի ղեկավար/
բ. Ստեփանյան Գոհար /դասախոս / խմբի ղեկավարի տեղակալ/
գ. Մաղաթյան Էվելինա /օպերատոր/
դ. Աբրահամյան Քնարիկ /ուսանող/

ե. Անդրեասյան Մարիետա /ուսանող/
զ. Հակոբյան Վաչիկ /ուսանող/
է. Ալաբիլիկյան Հակոբ /ուսանող/
ը. Ալոյան Գառնիկ /ուսանող/
թ. Գասպարյան Գարիկ /ուսանող/ժ. Գևորգյան Իշխան /ուսանող/
ժա. Զաքոյան Միլենա /ուսանող/
ժբ. Ղազարյան Նաղեժդա /ուսանող/ժգ. Խաչատրյան Նինել /ուսանող/
ժդ. Թամրազյան Էլմիա /ուսանող/
ժզ. Մանուկյան Ժորա /ուսանող/
ժէ. Մարգարյան Վրեժ /ուսանող/
Ժը. Կարապետյան Արսեն /ուսանող/
ժթ. Մարտիրոսյան Նոյ /ուսանող/
ի. Անտոնյան Միլենա /ուսանող/
իա. Ծառուկյան Միլենա /ուսանող/
իբ. Աբրահամյան Արայիկ /ուսանող
/իգ. Գասպարյան Տաթնիկ /ուսանող
/իդ. Հովսեփյան Կարեն /ուսանող/
իե. Ավետիսյան Լիլիթ /ուսանող/
իզ. Բաղդասարյան Ռոման /ուսանող/

ՔՊ նորմատիվները խթանելու, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի ստուգարքին առավելագույն ցուցանիշներ ապահովելու համար ֆիզղեկի հետ քոլեջում 2022 թվականի մայիս ամսին կազմակերպվել և անց են կացվել << Կորյուն >> մարզառազմական խաղեր, որին մասնակցել են առաջին կուրսերի հավաքական թիմերը:

- ԱՊՔ-ն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով, որը շահագործվում է ջեռուցման ժամանակաշրջանում, որպես կանոն, տևում է նոյեմբերի 15-ից մինչև մարտի 15-ը: Ջեռուցումն ապահովվում է ԱՊՔ-ի ողջ տարածքում: Մշտապես ապահովվում է 17-20 աստիճան տաքություն: Ջեռուցումն իրականացվում է շուրջօրյա: Կաթսայատան անվտանգ շահագործումն ապահովելու համար կնքվում է պայմանագիր լիցենզավորված համապատասխան կազմակերպության հետ:
- ԱՊՔ-ի բոլոր լսարաններում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ և ջեռուցման ամիսներին լսարաններում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- ԱՊՔ-ի միջանցքները ջեռուցվում են և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- ԱՊՔ-ն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ,թուղթ, ալկոգել):
- ԱՊՔ-ի բոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ տղաների, աղջիկների և դասախոսների համար: Սանհանգույցները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցողների համար:
- ԱՊՔ-ի բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և ապահոված են հիգիենայի պարագաներով (օճառով, թղթով և այլն):
- 2019թ. դեկտեմբերի 7 - ից բացվել է սննդի ընդունման կետ, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին:

Աղյուսակ 13. Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ.

<table>
<tr><th colspan="5">Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ</th><th>ԱՅՈ</th></tr>
<tr><td colspan="5">Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջսննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ</td><td>ՈՉ</td></tr>
<tr><td>Սննդի կետի տեսակը</td><td>Տարածքը</td><td>Սառը և հոսող ջրի առկայու-թյունը</td><td>Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը</td><td>Տաք սննդի հնարավորությունը</td><td>Վերա-նորոգվա՞ծ է, թե ոչ</td></tr>
<tr><td>Սննդի ընդունման կետ</td><td>10.5. ք.մ</td><td>այո</td><td>այո</td><td>տեղում տաք սնունդ չի պատրաստվում</td><td>այո</td></tr>
</table>

ԱՊՔ-ի սննդի ընդունման կետը ապահովված է տեխնոլոգիական սարքավորումներով և սառնարաններով: Այն ԱՊՔ-ի առաջին հարկում է, մաքուր է, լուսավոր, հարմարավետ, լիովին համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին, կա հոսող ջրի ծորակ, էլեկտրական թեյնիկ տաք ջրի համար: Կահավորված է սեղան-աթոռով: Աշխատակիցը ունի սանիտարական գրքույկ, կրում է համապատասխան արտահագուստ: ԱՊՔ-ի սննդի ընդունման կետի վիճակը պարբերաբար վերահսկվում է ԱՊՔ-ի բուժաշխատողի և հակահամաճարակային ծառայության կողմից: Սննդի մատակարարում տրվածէ լիցենզավորված ԱՁ-ին, սակայն տվյալ ուսումնական տարում սննդի կազմակերպում չի իրականացվել՝ պայմանավորված համավարակով:

- ԱՊՔ-ում առկա է բուժկետ, որտեղ կարող է տրամադրվել առաջին բուժօգնությունը ուսանողներին ու աշխատակազմին: ԱՊՔ-ում առկա է վերանորոգված բուժկետ՝ 1 որակավորված բուժաշխատողով, ով անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրել առաջին բուժօգնություն: Բուժկետը գտնվում է ԱՊՔ-ի 1-ին հարկում՝ ունի 13 քմ տարածք:Բուժկետում առկա են բոլոր անհրաժեշտ պարագաները (քաշը, հասակը չափելու սարք և դեղամիջոցներ): Առկա է լվացարան՝ մշտապես հոսող սառը ջրով: Բուժկետը հետևում է նաև վարակիչ հիվանդություններ տարած ուսանողների առողջական վիճակին,դասախոսների առողջությանը, ԱՊՔ-ի տարբեր տարածքների սանիտարական վիճակին, փաստաթղթեր պատրաստում ուսանողների առողջության վերաբերյալ: Ձմեռային ամիսներին կատարվել է սուր շնչառական վարակների և ջերմային ռեժիմի օրական մոնիթորիգ: Ապահովելու համար առողջ և անվտանգ աշխատանքային ու կրթական միջավայր՝ բուժքույրը COVID-19 հսկողության պատասխանատուի հետ ԱՊՔ-իաշխատակիցների և ուսանողների համար անց են կացրել զրույցներ:

**Աղյուսակ 14. Տվյալներ ԱՊՔ-ում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ**

| **Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ** | | | | | **ԱՅՈ** |
|---|---|---|---|---|---|
| ԱՊՔ-ն ունի բուժաշխատող և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն | | | | | ԱՅՈ |
| Բուժկետի գտնվելու վայրը և տարածքը | Բուժաշխա-տողների թիվըն նրանց պաշտոնները | Բուժկետում առկա գույքը | Բուժկետը վերանորոգվա՞ծ է, թե ոչ | Սանիտարական վիճակը | Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը |
| I հարկ13 ք.մ. | 1 բուժքույր | տե՛ս Աղյուսակ 14/ա | այո | գերազանց | տե՛ս Աղյուսակ 14/ա |

Բուժկետում առկա գույքն արդիականացման կարիք ունի:

Աղյուսակ 14/ա բուժկետի առկա գույքը.

| № | Գույքի անվանումը | Քանակը |
|---|---|---|
| 1 | պահարան բժշկական | 1 |
| 2 | բոյաչափ | 1 |
| 3 | կշեռք բժշկական (մետաղյա) | 1 |
| 4 | բժշկական պատգարակ | 1 |
| 5 | բժշկական սեղան (ապակյա) | 2 |
| 6 | տոնոմետր | 1 |
| 7 | տոնոմետր | 1 |
| 8 | բիքս | 2 |
| 9 | բիքս | 2 |
| 10 | թթվածնի բալոն | 1 |
| 11 | ներքնակ | 1 |
| 12 | բարձ | 1 |
| 13 | պինցետ | 2 |
| 14 | լաղոկ | 2 |
| 15 | կուշետկա | 1 |
| 16 | սավան | 2 |
| 17 | լվացարան | 1 |
| 18 | բարձի երես | 1 |
| 19 | խալաթ (սպիտակ) | 1 |
| 20 | հակահիստամինային, ջերմ իջեցնող, սպազմալիտիկ դեղանյութեր | Առկա է |
| 21 | բժշկական սպիրտ | Առկա է |
| 22 | սանտավիկ | Առկա է |
| 23 | բամբակ | Առկա է |
| 24 | դիմակներ և ձեռնոցներ | Առկա է |

2021-2022 ուսումնական տարում մուտքերի մոտ գործել է մեկուսարան՝ ջերմաչափման արդյունքում հայտնաբերված հիվանդ ուսանողների մեկուսացման համար: Մեկուսարանն ապահովված է անհրաժեշտ միջոցներով: Կատարվել է նաև դասախոսների ջերմաչափում և գրանցումները նշվել անձնակազմի ջերմաչափման արդյունքների գրանցամատյանում:

Քոլեջի 2 մուտքերի մոտ տեղադրվել են ավտոմատ ջերմաչափման սարքեր և ձեռքերի ախտահանման նյութեր:

## 2.5 ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ԱՊՔ-ն իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական, առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ: Դրանք նախատեսված են 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների և կուրսղեկների պլաններով:

1. ԱՊՔ-ում չեն գրանցվել ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքեր. Այդուհանդերձ իրականացվում են ծրագրեր դրանց չարաշահումը կանխարգելելու ուղղությամբ:
2. ԱՊՔ-ում չեն գրանցվել մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր:
3. ԱՊՔ-ում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի կանխարգելման մեխանիզմներ:
4. Ընտանիքում երեխայի խնամքի ու դաստիարակության, ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացմանն ուղղվածհարցերը մշտապես քննարկվում են ԱՊՔ-ի ծնողական ժողովների ընթացքում:
5. ԱՊՔ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու համար հատուկ դասընթացներ և միջոցառումներ չեն անցկացվել, չնայած որոշ մոդուլների շրջանակ-ներում այս թեմայի շուրջ տարբեր կուրսերում սեմինարներ են վարել կենսաբանության դասա-խոսները, իսկ նախորդ տարիներին ԱՊՔ-ում դասախոսություններով, զրույցներով հանդես են եկել համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներ:
6. ԱՊՔ-ում չեն իրականացվում ուսումնական դասընթացներ՝ ուղղված ընդդեմ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման:

Դասախոսները կարևորում են ուսանողների հոգևոր և բարոյական որակների ձևավորումը՝ օգտագործելով իրենց դասավանդած առարկաների դաստիարակչական հնարավորությունները: ԱՊՔ-ն գիտակցում է իր պատասխանատվությունը ապագա մարդու ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջության համար: Ինչպես ֆիզկուլտուրայի դասերին, այնպես էլ դրանցից դուրս կազմակերպվում են տարաբնույթ սպորտային միջոցառումներ, մրցույթներ, ֆլեշմոբեր: Կարևոր է նաև շաբաթօրյակների դերը: Ուսանողների ֆիզիկական վիճակին հետևում են քոլեջի տարբեր օղակներ՝ կուրսղեկ,զինղեկ, դասախոսներ, բուժկետ:

ԱՊՔ-ն աշխատանքներ է տանում ուսանողների հետ՝ նրանց մոտ ձևավորելով կյանքի նկատմամբ վերաբերմունքի հուսալի համակարգ, դաստիարակելով մարդկային դրական այնպիսի արժեքներ, որոնք վնաս չեն պատճառի ուրիշներին: ԱՊՔ-ն նաև մշակույթի իրական

օջախ է, ու դրա վառ ապացույցն են քոլեջում իրականացվող բազմաթիվ միջոցառումները, որոնք իրականացվում են նախօրոք կազմված ժամանակացույցով: ԱՊՔ-ի ամենատեսանելի մասում փակցված են ՀՀ դրոշն ու զինանշանը, օրհներգը:

Ուսանողները գիտեն ՀՀ պետական խորհրդանիշների բովանդակությունն ու նշանակությունը, օրհներգը, այն հեղինակած բանաստեղծին ու կոմպոզիտորին, նաև քաղաքացու պահվածքը՝ օրհներգը լսելիս: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով անց են կացվել զրույցներ, դաս-միջոցառումներ:

2021-2022 ուստարվում քոլեջի ֆիզղեկը՝ ըստ իր աշխատանքային պլանի, անցկացրել է ներքոլեջային <<Մարզական փառատոն>> հետևյալ մարզաձևերից՝ շաշկի, շախմատ, աղջիկների և տղաների բազկամարտ, ֆուտբոլ, կշռաքարի բարձրացում, պարանի ձգում, վազք 100 մ: Մրցումներն իրականացվել են առաջին կիսամյակի ընթացքում, հոկտեմբերի 1-ից 15-ը: Մրցանակային տեղեր գրաված ուսանողները պարգևատրվել են մեդալներով և պատվոգրերով:

**Աղյուսակ 15.**

| Կուրսը կամ մասնակիցների թիվը | Ծրագիրը կամ միջոցառումը, թեման | Կատարման ժամանակը | Կատարող անձ |
|---|---|---|---|
| 30 կուրս /568/ ուսանող | «Առողջ ապրելակերպ» թեմաներ՝ ուղղված անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելմանը, թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիության խթանմանը, ինչպես նաև ակտիվ ու առողջ կենսակերպի կազմակերպմանն ու արմատավորմանը: | Տարվա ընթացքում կուրսղեկական ժամերին | ԱՊՔ-ի ՔՊ շտաբի պետ՝ Հ. Առաքելյան, կուրսղեկներ |

ԱՊՔ-ի նկատմամբ վստահության բարձրացմանը նպաստում են անվտանգ և ապահով միջավայրի ստեղծմանն ուղղված ՄՈՒՀ-ի աշխատանքները:

# ՄԱՍ 3.
# ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ
## 3.1 ԱՊՔ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.Սովորողների միջին տարեկան գնահատականները ըստ կրթական աստիճանների:

**Աղյուսակ 16. Տվյալներ 2021-2022 ուստարում սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ**

**ա/**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | | Տարեկան միջին գնահատականները՝ըստ հիմնական առարկաների | | | | Ավարտական քննությունների միջին միավորները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկ | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկ. | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկ. |
| Հայոց լեզու | 20 | 26 | 27 | 25 | 7.4 | 5,5 | 8.2 | 6,4 | 13,6 | 10.8 | 15.3 | 13.2 |
| Գրականություն | 20 | 26 | 27 | 25 | 7.1 | 5,5 | 8.3 | 6.5 | 13,6 | 10.8 | 15.3 | 13.2 |
| Հանրահաշիվ | 20 | 26 | 27 | 25 | 6.4 | 5.3 | 8.3 | 6.5 | 11.5 | 14.3 | 16.1 | 12.5 |
| Երկրաչափություն | 20 | 26 | 27 | 25 | 7,1 | 5,4 | 7.9 | 6.6 | 11,5 | 14.3 | 16.1 | 12.5 |
| Հայոց պատմություն | 20 | 26 | 27 | 25 | 7,3 | 6,2 | 7.9 | 6.1 | 11.5 | 12.5 | 15.9 | 13.4 |
| Ֆիզիկական կուլտ. | 20 | 26 | 27 | 25 | 7.8 | 7.0 | 8.6 | 7.1 | 7,6 | 7.1 | 8.6 | 7.2 |

**բ/**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | | Տարեկան միջին գնահատականները՝ըստ հիմնական առարկաների | | | | Ավարտական քննությունների միջին միավորները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Հ/Ծ | I Համ. գեղար. նախագծում | I Նախադպ. կրթ. | I Կոսմետ. և դիմ արվեստ | I Հ/Ծ | I Համ. գեղար. նախագծում | I Նախադպ. կրթ. | I Կոսմետ. և դիմ. արվեստ | I Հ/Ծ | I Համ. գեղար. նախա-գծում | I Նախադպ. կրթ. | I Կոսմետ. ևդիմ. արվեստ |
| Հայոց լեզու | 19 | 15 | 16 | 9 | 6,9 | 7,4 | 7,9 | 5,7 | 13,1 | 14.1 | 13,4 | 10,4 |
| Գրականություն | 19 | 15 | 16 | 9 | 7,1 | 7,5 | 7,6 | 5,9 | 13,1 | 14,1 | 13,4 | 10,4 |
| Հանրահաշիվ | 19 | 15 | 16 | 9 | 6,6 | 7,0 | 6,2 | 5,4 | 16,4 | 16,2 | 13,1 | 11,1 |
| Երկրաչափություն | 19 | 15 | 16 | 9 | 6,6 | 7,7 | 6,0 | 5,5 | 16,4 | 16,2 | 13,1 | 11,1 |
| Հայոց պատմություն | 19 | 15 | 16 | 9 | 6,6 | 7,3 | 6,8 | 5,1 | 14 | 16 | 13,7 | 12 |
| Ֆիզիկական կուլտ. | 19 | 15 | 16 | 9 | 8 | 8 | 7,9 | 7,9 | 8 | 8,1 | 8,2 | 7,7 |

**գ/**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | Տարեկան միջին գնահատականները՝ըստ հիմնական առարկաների | | Ավարտական քննությունների միջին միավորները | |
|---|---|---|---|---|---|---|
| | II Խ/Գ | II Գին. և հյութ. արտ | II Խ/Գ | II Գին. և հյութ. արտ | II Խ/Գ | II Գին. և հյութ. արտ |
| Հայոց լեզու | 13 | 19 | 4,8 | 5,2 | 9,1 | 11,1 |
| Գրականություն | 13 | 19 | 4,8 | 5,0 | 9,1 | 11,1 |
| Հանրահաշիվ | 13 | 19 | 4,8 | 5,4 | 9,1 | 11,4 |
| Երկրաչափություն | 13 | 19 | 4,8 | 5,5 | 9,1 | 11,4 |
| Հայոց պատմություն | 13 | 19 | 4,9 | 6,4 | 8,7 | 11,3 |
| Ֆիզիկական կուլտ. | 13 | 19 | 6,7 | 6,9 | 6,6 | 7 |

Միջին մասնագիտական 9-ամյա կրթությամբ սովորող բոլոր առաջին կուրսերը հանձնել են փոխադրական քննություններ: Գնահատումը կատարվել է 20 միավորանոց գնահատման սանդղակով, իսկ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գնահատումը՝ 10 միավորանոց գնահատման սանդղակով /ուսանողները հանձնել են ստուգարք/: 2021-2022 ուստարում առաջին կուրսերի սովորողների փոխադրական ավարտական քննությունների միջին միավորը բարձր է <<Ֆինանսներ>>, ապա՝ <<Համակարգչային գեղարվեստական նախագծում>> կուրսե-րում:
Նախնական մասնագիտական (արհեստագործական) բաժնի 2-րդ կուրս «Խոհարարական գործ» և 2-րդ կուրս «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտությունների 9-ամյա կրթական համակարգով սովորող ուսանողները փոխադրական քննություններ հանձնել են առաջին տարվա ուսումնական գործընթացը սկսելուց 104 շաբաթ հետո, / հիմք՝ ԱՊՔ-ի ներքին փաստաթղթեր: Այս կուրսերի սովորողների փոխադրական ավարտական քննությունների միջին միավորները բավականին ցածր են:
գ/ Տվյալներ ավարտական կուրսերի սովորողների ուսումնառության արդյունքների վերաբեր-յալ տվյալ՝ 2021-2022 ուստարում

| № | Կոդը | Մասնագիտության անվանումը | Սովորողների թիվը | Ավարտական քննությունների միջին միավորները |
|---|---|---|---|---|
| **Միջին մասնագիտական կրթական համակարգ՝ III կուրսեր** | | | | |
| **1.** | 0916.01.5 | Դեղագործություն | 11 | 8 |
| **2.** | 0412.01.5 | Ֆինանսներ | 12 | 8.3 |
| **3.** | 0414.01.5 | Շուկայաբանություն | 10 | 7.1 |
| **4.** | 0411.01.5 | Հաշվապահ. հաշվ. | 18 | 8.1 |
| **5.** | 0413.02.5 | Սպասարկման կազմ. | 25 | 7,7 |
| **6.** | 0112.01.5 | Նախադպր. կրթ. | 13 | 9,3 |
| **7.** | 1012.02.5 | Կոսմետ. և դիմ. արվեստ | 19 | 7,7 |
| **8.** | 0613,02,5 | Համ. գեղ. նախագծում | 10 | 8,3 |
| **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգ՝ կուրսեր** | | | | |
| **1.** | 1013.03.4 | Խոհարարական գործ | - | - |
| **2.** | 1012.01.4 | Վարս. արվեստ և զարդ. դիմ. | - | - |
| **3.** | 0723.03.4 | Կաթի արտ. տեխ. | 13 | 9,2 |
| **4.** | 0611.01.4 | Համակարգիչ. շահագործում | - | - |
| **5.** | 0721.03.4 | Գինեգործ. և հյութ. արտադր. | - | - |

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ավարտական բոլոր կուրսերում ուսումնառության վերջնարդյունքները բավականին բարձր են: Բարձր արդյունք գրանցվել է «Նախադպրոցական կրթություն», համեմատաբար ցածր արդյունք միայն «Շուկայաբանություն» կուրսում: Հաշվապահական հաշվառում կուրսի 1 ուսանողի չի թույլատրվել մասնակցել պետական ամփոփիչ քննությանը՝ պրակտիկային չմասնակցելու և հաշվետվության պաշտպանությանը չմասնակցելու պատճառով:

2021-2022 ուստարում պետական ամփոփիչ ավարտական քննության գնահատականը նշանակվել է 10 միավորանոց համակարգով՝ ըստ ԱՊՔ-ի ներքին փաստաթղթերի:

**Աղյուսակ 17. Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2020-2021 (նախորդ) ուստարում**

**ա/**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | | Տարեկան միջին գնահատականները՝ըստ հիմնական առարկաների | | | | Ավարտական քննությունների միջին միավորները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկ | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկ. | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկ. |
| Հայոց լեզու | 28 | 27 | 25 | 23 | 6.75 | 7.1 | 7.9 | 7.1 | 13 | 14 | 16.9 | 14.5 |
| Գրականություն | 28 | 27 | 25 | 23 | 7.3 | 7.3 | 7.9 | 7.1 | 13 | 14 | 16.9 | 14.5 |
| Հանրահաշիվ | 28 | 27 | 25 | 23 | 6.5 | 7.2 | 7.9 | 6.5 | 14 | 14.3 | 17.2 | 12.6 |
| Երկրաչափություն | 28 | 27 | 25 | 23 | 6.6 | 7.1 | 7.8 | 6.6 | 14 | 14.3 | 17.2 | 12.6 |
| Հայոց պատմություն | 28 | 27 | 25 | 23 | 6.6 | 7.1 | 7.5 | 6.09 | 15.4 | 12.5 | 17.2 | 14.3 |
| Ֆիզիկական կուլտ. | 28 | 27 | 25 | 23 | 7.8 | 7.9 | 8.2 | 6.9 | 8.1 | 8.1 | 8.6 | 7 |

**բ/**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Տարեկան միջին գնահատականները՝ըստ հիմնական առարկաների | | | Ավարտական քննությունների միջին միավորները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Դեղագործ. | I Նախադպ. կրթ. | I Կոսմետ. և դիմ արվեստ | I Դեղագործ. | I Նախադպ. կրթ. | I Կոսմետ. և դիմ. արվեստ | I Դեղագործ. | I Նախադպ. կրթ. | I Կոսմետ. և դիմ. արվեստ |
| Հայոց լեզու | 5 | 14 | 9 | 7,4 | 8.1 | 6.8 | 16.4 | 13.9 | 9.4 |
| Գրականություն | 5 | 14 | 9 | 8,1 | 8.6 | 6.8 | 16,4 | 13.9 | 9,4 |
| Հանրահաշիվ | 5 | 14 | 9 | 7.4 | 7.7 | 6.5 | 15.8 | 15.7 | 11.7 |
| Երկրաչափություն | 5 | 14 | 9 | 7.4 | 7.6 | 6.8 | 15,8 | 15.7 | 11.7 |
| Հայոց պատմություն | 5 | 14 | 9 | 7.4 | 7.6 | 4.8 | 17 | 16.7 | 11 |
| Ֆիզիկական կուլտ. | 5 | 14 | 9 | 8.7 | 8.8 | 7.4 | 9 | 8.5 | 7.8 |

**գ/**

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | Տարեկան միջին գնահատականները՝ըստ հիմնական առարկաների | | Ավարտական քննությունների միջին միավորները | |
|---|---|---|---|---|---|---|
| | I Համ. ծր. ապ.և ավտոմատ. համակարգեր | I Համ. գեղար. նախագծում | I Համ. ծր. ապ. և ավտոմատ. համակարգեր | I Համ. գեղար. նախագծում | I Համ. ծր. ապ. և ավտոմատ. համակարգեր | I Համ. գեղար. նախագծում |
| Հ. լեզու | 17 | 15 | 6.75 | 7.2 | 13.4 | 16.3 |
| Գրականություն | 17 | 15 | 6.25 | 7.6 | 13.4 | 16.3 |
| Հանրահաշիվ | 17 | 15 | 7 | 7.3 | 14.6 | 15 |
| Երկրաչափություն | 17 | 15 | 6.9 | 7.3 | 14.6 | 15 |
| Հայոց պատմություն | 17 | 15 | 6.7 | 7.01 | 14.7 | 16.4 |
| Ֆիզիկական կուլտ. | 17 | 15 | 7.9 | 8.0 | 7.7 | 7.9 |

գ/ Տվյալներ ավարտական կուրսերի սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2020 - 2021 (նախորդ) ուստարում

| № | Կոդը | Մասնագիտության անվանումը | Սովորողների թիվը | Ավարտական քննությունների միջին միավորները |
|---|---|---|---|---|
| Միջին մասնագիտական կրթ. համ. III կուրսեր | | | | |
| **1.** | 0916.01.5 | Դեղագործություն | 11 | 8 |
| **2.** | 0412.01.5 | Ֆինանսներ | 17 | 8.1 |
| **3.** | 0414.01.5 | Շուկայաբանություն | 11 | 7.3 |
| **4.** | 0411.01.5 | Հաշվապահ. հաշվ. | 18 | 8.2 |
| **5.** | 0413.02.5 | Սպասարկման կազմ. | 30 | 5.7 |
| **6.** | 0112.01.5 | Նախադպր. կրթ. | 12 | 8.5 |
| **7.** | 1012.02.5 | Կոսմետ. և դիմ. արվեստ | 12 | 7 |
| **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթ. համ. I կուրսեր** | | | | |
| 1. | 1013.03.4 | Խոհարարական գործ | - | - |
| 2. | 1012.01.4 | Վարս. արվեստ և զարդ.դիմ. | 3 | 8 |
| 3. | 0723.03.4 | Կարի արտ. տեխ. | 15 | 8.3 |
| 4. | 0611.01.4 | Համակարգիչ. շահագործում | 2 | 10 |
| 5. | 0721.03.4 | Գինեգործ. և հյութ.արտադր. | 10 | 8.5 |

2021-2022 ուստարում ավարտական կուրսերի սովորողների ուսումնառության արդյունքները գրեթե փոփոխության չեն ենթարկվել, բայց <<Սպասարկման կազմակերպում >> կուրսում նկատելի բարձրացել է ավարտական քննության միջին միավորը /7,7/:

**Աղյուսակ 18. Տվյալներ I կուրսերում հանրակրթական ծրագրի պետական ավարտական քննությունների արդյունքների դինամիկայի վերաբերյալ տվյալ տարում՝ 2021- 2022թթ.**
**ա/**

| Քննական առարկաներ | Քննությունների միջին միավորների փոփոխությունը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քննությունների միջին միավորների աճի տոկոսը | | | | Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը | | | |
| | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկա. | I Հ/հ | I Ս/կ | I Ֆին. | I Շուկա. |
| Հայոց լեզու | 0,6 կամ 4,6% | | | | | 3,2 կամ 22,9% | 1,6 կամ 9,5% | 1,3 կամ 9% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գրականություն | 0,6<br>կամ<br>4,6% | | | | | 3,2<br>կամ<br>22,9% | 1,6<br>կամ<br>9,5% | 1,3<br>կամ<br>9% |
| Հանրահաշիվ | | | | | 2,5<br>կամ<br>17,9% | 0<br>կամ<br>0% | 1,1<br>կամ<br>6,4% | 0,1<br>կամ<br>0,8% |
| Երկրաչափություն | | | | | 2,5<br>կամ<br>17,9% | 0<br>կամ<br>0% | 1,1<br>կամ<br>6,4% | 0,1<br>կամ<br>0,8% |
| Հայոց պատմություն | | | | | 3,9<br>կամ<br>25,3 % | 0<br>կամ<br>0% | 1,3<br>կամ<br>7,6% | 0,9<br>կամ<br>6,3% |
| Ֆիզիկական կուլտ. | | | | 0,2<br>կամ<br>2,9% | 0,5<br>կամ<br>6,2 % | 1<br>կամ<br>12,3% | 0<br>կամ<br>0% | |

բ/

| Քննական առարկաներ | Քննությունների միջին միավորների փոփոխությունը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քննությունների միջին միավորների աճի տոկոսը | | | | | Քննությունների միջին միավորներինվազման տոկոսը | | | | |
| | I<br>Դեղ. | I<br>Նախ.կրթ. | I<br>Կոսմ. և դիմ. արվեստ | I<br>Համ. ծր. ապ. և ավտմատ. համա-կարգեր | I<br>Համ.գեղ. նախ. | I<br>Դեղ. | I<br>Նախ.կրթ. | I<br>Կոսմետ. և դիմ. արվեստ | I<br>Համ. ծր. ապ. և ավտմատ. համա-կարգեր | I<br>Համ.գեղ. նախ. |
| Հայոց լեզու | - | | 1<br>կամ<br>10,6% | | | - | 0,5<br>կամ<br>3,6% | | 0,3<br>կամ<br>2,2% | 2,2<br>կամ<br>13,5% |
| Գրականություն | - | | 1<br>կամ<br>10,6% | | | - | 0,5<br>կամ<br>3,6% | | 0,3<br>կամ<br>2,2% | 2,2<br>կամ<br>13,5% |
| Հանրահաշիվ | - | | | 1,8<br>կամ<br>12,3% | 1,2<br>կամ<br>8% | - | 2,6<br>կամ<br>16,6% | 0,6<br>կամ<br>5,1% | | |
| Երկրաչափություն | - | | | 1,8<br>կամ<br>12,3% | 1,2<br>կամ<br>8% | - | 2,6<br>կամ<br>16,6% | 0,6<br>կամ<br>5,1% | | |
| Հայոց պատմություն | - | | 0,1<br>կամ<br>0,9% | | | - | 0,7<br>կամ<br>4,2% | | 0,7<br>կամ<br>4,8% | 0,4<br>կամ<br>2,4% |
| Ֆիզիկական կուլտ. | - | | | 0,3<br>կամ<br>3,9% | 0,2<br>կամ<br>2,5% | - | 0,4<br>կամ<br>4,7% | 0,1<br>կամ<br>1,3% | | |

Վերլուծելով ցուցանիշները՝ տնտեսագիտական բոլոր կուրսերում նկատելի է քննությունների միջին միավորների նվազման տոկոս: Հատկապես ցուցանիշը նվազել է 25,3 %-ով «Հայոց պատմություն» առարկայից, միայն «Հաշվապահական հաշվառում» կուրսում 4,6% աճ «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից, իսկ «Շուկայաբանություն» կուրսում՝ «Ֆիզիկա-կան կուլտուրա» առարկայից 2,9% աճ: Նախորդ տարվա համեմատ որոշ առարկաների քննությունների միջին միավորների աճի տոկոս գրանցվել է նաև «Կոսմետիկա և դիմահարդարման

արվեստ», «Համակարգչային գեղարվեստական նախագծում» և «Համակարգչային ծրագրային ապահով. և ավտ.համակարգեր» կուրսերում: Առաջին կուրսի ուսանողների սկզբնական գիտելիքների պակասը ազդեցություն է ունեցել կրթության որակի վրա:

գ/ Տվյալներ 2020-2021 ուստարվա ավարտական կուրսերի պետական ավարտական քննությունների արդյունքների դինամիկայի վերաբերյալ

| **Բաժինները և կուրսը** | | **Քննությունների միջին միավորների փոփոխությունը** | |
|---|---|---|---|
| Միջին մասնագիտական կրթական համակարգ | | Քննությունների միջին միավորների աճի տոկոսը | Քննությունների միջին միավորներինվազման տոկոսը |
| III | Դեղագործություն | - | - |
| III | Ֆինանսներ | 0,2 կամ 2,5% | |
| III | Շուկայաբանություն | | 0,2 կամ 2,7% |
| III | Հաշվապահ.հաշվ. | | 0,1 կամ 1,2% |
| III | Սպասարկման կազմ. | 2 կամ 35% | |
| III | Նախադպր. կրթ | 0,8 կամ 9,4 % | |
| III | Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ | 0,7 կամ 10% | |
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգ | | | |
| I | Խոհարարական գործ | - | - |
| I | Վարս. արվեստ և զարդ. դիմ. | - | - |
| I | Կարի արտադրության տեխնոլոգիա | 0,9 կամ 10,8% | |
| I | Համակարգիչների շահագործում | - | - |
| I | Գինեգործ. և հյութ. արտադր. | - | - |

Աղյուսակ 18-ի գ-ն վերլուծելիս նկատելի է գրեթե բոլոր կուրսերի ավարտականքննությունների միջին միավորների աճ, հատկապես միջին մասնագիտական կրթական համա-կարգի «Սպասարկաման կազմակերպում» բաժնում՝ 35% : Ցուցանիշները միայն նվազել են «Հաշվապահական հաշվառում» և «Շուկայաբանություն» կուրսերում:

**Աղյուսակ 19. Տվյալներ բոլոր կուրսերի սովորողների ուսումնառության արդյունքներիվերաբերյալ տվյալ 2021-2022 ուստարում (I և II կիսամյակներում)**

| **№** | Մասնագիտության անվանումը | Սովորողներ թիվը կուրսերում | | | | | | Առաջադիմությունը **%** | | | | | | Որակականը **%** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I կիսամյակ | | | II կիսամյակ | | | I կիսամյակ | | | II կիսամյակ | | | I կիսամյակ | | | II կիսամյակ | | |
| Միջին մասնագիտական, ուսման տևողությունը՝ 3 տարի | | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III |
| **1** | Դեղագործություն | - | 5 | 9 | - | 5 | 11 | - | 80 | 100 | - | 100 | 100 | - | 100 | 60 | - | 100 | 82 |
| **2** | Ֆինանսներ | 28 | 24 | 12 | 27 | 24 | 12 | 100 | 100 | 100 | 96 | 79 | 100 | 89 | 63 | 100 | 75 | 71 | 100 |
| **3** | Շուկայաբանություն | 25 | 22 | 10 | 25 | 20 | 10 | 100 | 100 | 100 | 100 | 95 | 100 | 40 | 41 | 30 | 36 | 45 | 40 |
| **4** | Հաշվապահական Հաշվառում | 20 | 27 | 14 | 20 | 28 | 18 | 100 | 93 | 99 | 100 | 93 | 95 | 30 | 26 | 71 | 25 | 46 | 48 |
| **5** | Սպասարկման կազմ. | 28 | 25 | 24 | 26 | 25 | 25 | 93 | 100 | 100 | 96 | 96 | 100 | 29 | 60 | 63 | 15 | 56 | 70 |
| **6** | Նախադպր. կրթ. | 16 | 19 | 13 | 16 | 19 | 13 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 25 | 47 | 92 | 25 | 58 | 77 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **7** | Կոմետ. և դիմ. արվեստ | 13 | 11 | 20 | 9 | 11 | 19 | 100 | 100 | 90 | 100 | 100 | 89 | 8 | 45 | 15 | 22 | 27 | 21 |
| **8** | Համակարգչային գեղ. նախ. | 15 | 15 | 10 | 15 | 13 | 10 | 100 | 57 | 60 | 100 | 93 | 80 | 53 | 53 | 50 | 40 | 43 | 50 |
| **9** | Համ.ծր. ապ. և ավտոմատ.հա. | 19 | 17 | – | 19 | 17 | - | 100 | 100 | - | 100 | 88 | - | 37 | 41 | - | 37 | 35 | - |
| | Միջինը | 18 | 18 | 14 | 17 | 18 | 15 | 99 | 92 | 94 | 99 | 94 | 96 | 39 | 53 | 60 | 34 | 53 | 61 |
| **Նախնական մասնագիտական՝ (արհեստագործական), ուսմանտևողությունը՝ 3 տարի /9-ամյա կրթությամբ/** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Գինեգործ. և հյութ. արտադր. | 20 | 20 | | 20 | 19 | | 100 | 100 | | 100 | 100 | | 10 | 10 | | 20 | 5.3 | |
| 2 | Խոհարարական գործ | 18 | 13 | | 16 | 13 | | 100 | 100 | | 100 | 85 | | 16 | 0 | | 25 | 0 | |
| | Միջինը | 17 | 17 | | 17 | 16 | | 100 | 100 | | 100 | 93 | | 13 | 5 | | 22,5 | 2,7 | |
| **Նախնական մասնագիտական՝ (արհեստագործական), ուսման տևողությունը՝ 1տարի /12-ամյա կրթությամբ/** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Վարս. արվ. նզարդ. դիմ. | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Կարի արտ. տեխնոլոգիա | 16 | | | 14 | | | 100 | | | 100 | | | 44 | | | 78 | | |
| 3 | Համակարգիչ. շահագործում | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Գինեգործ.և հյութ.արտադր. | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Միջինը | 16 | | | 14 | | | 100 | | | 100 | | | 44 | | | 78 | | |

Վերլուծությունից պարզ է դառնում, որ միջին մասնագիտական կրթական համակարգի ուսանողների ուսումնառության արդյունքների որակական միջին տոկոսը առաջին կուրսերում իջել է, 2-րդ կուրսերում մնացել է անփոփոխ,իսկ 3-րդ կուրսերում՝ բարձրացել: Արհեստագործական համակարգում «Կարի արտադրություն և տեխնոլոգիա» բաժնում որակական միջին տոկոսը բարձրացել է, իսկ 9-ամյա կրթության հենքով «Գինեգործություն և հյութերի արտադրություն» և «Խոհարարական գործ» բաժիններում որակական միջին տոկոսը առաջին կուրսերում բարձրացել է , իսկ 2-րդ կուրսերում՝ իջել:

ԱՊՔ–ի դասախոսները մեծ ջանքեր են գործադրում ապագա հմուտ մասնագետներ պատրաստելու գործում: Որակական ցածր ցուցանիշով առանձնանում է «Խոհարարական գործ» 2-րդ կուրսը՝ 0% որակական ցուցանիշ: Այստեղ անելիքներ շատ կան, պետք է կիրառվեն նոր ու ավելի արդյունավետ ուսումնառության և դասավանդման մեթոդներ որակական ցու-ցանիշը բարձրացնելու նպատակով:

Աղյուսակ 20. Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուսումնական տարիների համար՝ ըստ կրթական աստիճանների.

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | | | 2020-2021 ուստարի | | | 2021-2022 ուստարի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I կուրս /միջին մասն./ | II կուրս /միջին մասն./ | միջին մասն. նախն. մասն. ավարտական կուրսեր | I կուրս /միջին մասն. և նախն. մասն. / | II կուրս /միջին մասն./ | միջին մասն. և նախն. մասն. ավարտական կուրսեր | I կուրս /միջին մասն. և նախն. մասն. / | II կուրս /միջին մասն./ | միջին մասն. և նախն. մասն. ավարտական կուրսեր |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը | 11<br>10.4% | 19<br>18.6% | 35<br>20.8% | 8<br>4,04% | 18<br>15,7% | 24<br>16,6% | 9<br>4,6% | 37<br>19% | 31<br>23,5% |
| Լավ առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը | 36<br>34.2% | 20<br>19.6% | 44<br>26.1% | 59<br>29,7% | 30<br>26,3% | 42<br>29,1% | 50<br>25,9% | 48<br>25% | 40<br>30,3% |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը | 58<br>55.2% | 63<br>61.7% | 89<br>52.9% | 131<br>66,1% | 66<br>57,8% | 78<br>54,1% | 134<br>69,4% | 109<br>56% | 61<br>46,2% |
| Ավարտման գործակից (հաշվարկ՝ ավարտական կուրսերում քննություններից դրական գնահատական ստացածների հարաբերությունը նույն կուրսերի ուսանողների ընդհանուր թվին՝ %-ային արտահայտությամբ) | 1 կամ<br>100% | 1կամ<br>100% | 1 կամ<br>100% | 1 կամ<br>100% | 1 կամ<br>100% | 1 կամ<br>100% | 1 կամ<br>100% | 1 կամ<br>100% | 1 կամ<br>100% |
| Ավարտական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը | 0 կամ<br>0 % | 0կամ0<br>% | 0 կամ<br>0 % | 0 կամ<br>0 % | 0 կամ<br>0 % | 0 կամ<br>0% | 0 կամ<br>0 % | 0 կամ<br>0 % | 0 կամ<br>0% |
| Սովորողների բացակայությունների ընդհանուրթիվը՝ ժամերով՝ ըստ կրթական աստճանների | 2438 | 3776 | 5821 | 8527 | 4021 | 2779 | 8704 | 11259 | 4766 |
| Մի մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն փոխադրված սովորողների թիվը | 0 | 2 | 0 | 0 | 4 | 0 | 0 | 5 | 0 |
| Ուսումնական տարվա ընթացքում ԱՊՔ-ից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը , այդթվում՝ այլ հաստատություններ, այլ բնակավայր կամ այլ երկիր ընտանիքի տեղափոխման և այլ պատճառներով | 21 | 15 | 7 | 28 | 8 | 13 | 24 | 11 | 11 |

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| Հիմնական կրթության /9-ամյա/ հիմքով ընդունվածների և ավարտածների թիվը և տոկոսը | 108 կամ 59%<br>113 կամ 63,4% | 221 կամ 84,1%<br>100 կամ 71,9% | 225 կամ 88%<br>105 կամ 81% |
| Միջնակարգ կրթության /12-ամյա/ հիմքով ընդունվածների և ավարտածներիթիվը և տոկոսը | 75 կամ 41%<br>65 կամ 36,6 % | 41 կամ 15,6%<br>39 կամ 28,1 | 32 կամ 12%<br>25 կամ 19% |
| Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ | 49<br>26,6 % | 30<br>21,2 % | 31<br>23,8 % |

2020-2021 ուստարում գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը 2019-2020ուս-տարվա նկատմամբ նվազել է 4,2%-ով, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ՝ 5,4%-ով: 2021-2022 ուստարում գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 6,9%-ով իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ աճել է՝ 2,6 %-ով: ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2021-2022 ուստարվա բարձր առաջադիմություն ցուցաբերած ՊՈՀ-ի կողմից երաշխավորվել է բարձրագույն ուսում-նական հաստատություններում կրթությունը շարունակելու 34 շրջանավարտների:

ԱՊՔ-ի ուսանողների առաջադիմությունը գտնվում է բավարար բարձր մակարդակի վրա և վերջին տարիների ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել:

ՈՒսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում ուսումնասիրվում են ուսանողների առաջադիմության և որակական ցուցանիշները: Այն կուրսերում, որտեղ ցածր են այս ցուցանիշները, թույլ են տալիս հասկանալ, որ շատ ուսանողներ մասնագիտության ընտրության հարցում սխալվել են, մասնագիտությունն ընտրել են ծնողների հորդորով:

ԱՊՔ-ն անընդհատ աշխատում է բարձրացնել ուսման որակը և ուսանողների կրթվա-ծության աստիճանը: Այդ նպատակով նախաձեռնվում են բազմաթիվ միջոցառումներ: Պարբե-րաբար ուսումնասիրվում է տարբեր առարկաների դրվածքը. մեթոդխորհուրդը, բաժնի վարիչ-ները բաժնի նիստերին, մանկավարժական խորհրդին հաշվետվություն են ներկայացնում ստուգման արդյունքների վերաբերյալ: ԱՊՔ-ն կազմակերպում է տնօրինության կողմից տրվող տարեկան ստուգողական գրավոր աշխատանքներ՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, մաթեմատիկա, անգլերեն առարկաներից բոլոր միջին մասնագիտական և արհեստագործական կրթական համակարգերի (հիմնական՝ 9-ամյա) I կուրսերում: Տնօրինության կողմից տրվող ստուգող-ական գրավոր աշխատանքները ուսուցման որակի ներքոլեջային մոնիտորինգ կատարելու գործիք են:

Գրավորներն անցկացվել են համակարգված՝ համաձայն նախօրոք կազմված ժամա-նակացույցի:

Գրավորների պատասխանատուներն են՝ տնօրենի տեղակալը ուսումնական մասի գծով

հանրակրթական ծրագրով բաժնի վարիչը և տվյալ առարկաների դասավանդողները: Բաժնի վարիչները նախօրոք ներկայացրել են առաջադրանքները, որոնք խստորեն համապատասխանում են պետական ծրագրին, թեմատիկ պլաններին: Գրավորները ստուգվել են համապատասխան մասնագետների կողմից, արդյունքները՝ համեմատվել ընթացիկ գնահատականների հետ, ամփոփվել բաժինների նիստերում, արձանագրվել, վերահսկվել է հանրակրթական ծրագրով բաժնի վարիչի կողմից: Կազմվել են արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ կուրսերի (Մեթոդխորհրդի և բաժնի վարիչների արձանագրությունների գիրք): Միջին մասնագիտական կրթական համակարգի (հիմնական՝ 9-ամյա) I կուրսերի փոխադրական քննությունները բարդ գործընթացներ են ուսանողների համար: Բացի կոնկրետ առարկայից գիտելիքի որոշակի ծավալից՝ նա պիտի ունենա կենտրոնանալու ունակության բարձր մակարդակ, մտավոր աշխատունակության կայունություն, բավարար հիշողություն (տեսողական, լսողական), զարգացած մտածողություն, ժամանակը առավելագույնս ճիշտ բաշխելու, կարճ ժամանակում ճիշտ որոշում ընդունելու կարողություն, վարքի ինքնակարգավորման ունակություն և այլն:Մանկավարժական կոլեկտիվի կողմից մեծ աշխատանք է կատարվում քննություններին նախապատրաստվելու համար: ԱՊՔ-ն մշտապես առավել ուշադրության կենտրոնում է պահում ուսուցման որակն ու ուսանողների առաջադիմության ցուցանիշները: Այդ կապակցությամբ իրականացվում են նաև ներքոլեջային մրցույթներ:

ԱՊՔ-ի ուսանողների պրակտիկաների անցկացման գործընթացը իրականացվել է ըստ նախապես կազմված ժամանակացույցի, իսկ դրանց պատշպանություններին ներկա են եղել պրակտիկայի բաժնի վարիչը և քոլեջի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարը:

Պետական ատեստավորման քննությունները բարդ գործընթացներ են նաև ավարտական միջին մասնագիտական և արհեստագործական կուրսերի ուսանողների համար: Մասնագիտական առարկաներ և մոդուլներ դասավանդող դասախոսները մեծ աշխատանք են կատարում ուսանողների հետ քննություններին նախապատրաստելու համար՝ կազմակերպվում են խորհրդատվության օրեր՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Քննությունների ժամանակ ԱՊՔ-ի ղեկավարությունը և լսարանների պատասխանատու դասախոսները բարյացակամ մթնոլորտ են ստեղծում, որպեսզի ուսանողները առանց ավելորդ լարվածության դրսևորեն իրենց գիտելիքները: Միջին մասնագիտական կրթական համակարգի (հիմնական՝ 9-ամյա և միջնակարգ 12-ամյա) II կուրսերի տարեկան քննաշրջանը իրականացվում է տարբերակված ստուգարքների և մոդուլների հանձնմամբ, որոնց ներկա են լինում ուումնական մասի պատասխանատու անձիք:

Գերազանց առաջադիմությամբ և նախաավարտական պրակտիկայում ակտիվ գործունեություն ցուցաբերած շրջանավարտներից շատերը որակավորման գործընթացին ցուցաբերելով բարձրակարգ գիտելիքներ՝ աշխատանքի առաջարկ են ստանում տարածաշրջանի հրավիրյալ գործատուներից անգամ պետական ատեստավորման քննությունների ժամանակ:

Աղյուսակ 21. Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներին ու մարզական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ .

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը /Երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող օլիմպիադա/ | - | - | 22 |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը /Երևանի պետական համալսարանի կողմիցանցկացվող օլիմպիադա/ | - | - | 6<br>27% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | - | - | 6<br>27% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | - | - | 5<br>83% |
| Միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | - | - | 2<br>0.38% |
| Միջազգային օլիմպիադաներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | - | - | 2<br>100% |
| Մարզային և հանրապետական սպորտային, մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը ընդհանուր սովորողների թվի նկատմամբ | 23<br>5,6 % | 1<br>0,2% | 2<br>0,38% |
| Մարզային և հանրապետական սպորտային, մրցույթներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը մասնակիցների թվի նկատմամբ | 8<br>34,7% | - | 2<br>100 % |
| Մարզային և հանրապետական երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը ընդհանուր սովորողների թվի նկատմամբ/ | 2<br>0,49% | | - |
| Մարզային և հանրապետական երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը մասնակիցների թվի նկատմամբ/ | 2<br>100% | | - |

ԱՊՔ-ն կարևորում է առարկայական օլիմպիադաները և մասնակցությունը դրանց: Վերջին տարիներին ԱՊՔ-ում ամենամյա օլիմպիադաներ է անցկացնում Երևանի պետական համալսարանը, ուր իրենց ուժերն են փորձում Արարատի մարզի տարբեր դպրոցների աշակերտներն ու քոլեջի ուսանողները: ԱՊՔ-ի ուսանողները պատրաստակամությամբ և ոգևորությամբ մասնակցում են տարբեր մրցույթների և ցուցաբերում են լավ արդյունքներ: Առաջիկա տարիներին իրականացվելու են միջոցառումներ՝ մասնակցությունը առավել ակտիվ ացնելու ուղղությամբ: Բացի առարկայական օլիմպիադաներից ԱՊՔ-ի ուսանողները բավական լուրջ արդյունքներ են դրսևորում սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթ-

ներին և նվաճում են հաղթանակներ ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային ասպարեզներում:

## 3.2 ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Քոլեջն ունի դասախոսական որակյալ անձնակազմ, և դասախոսները տիրապետում են դասավանդման ժամանակակից մեթոդներին:

**Աղյուսակ 22. Տվյալներ դասախոսական կազմի և նրանց գործունեության վերաբերյալ.**

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող դասախոսների, վարպետների թիվը և տոկոսը | 32<br>84 % | 42<br>83 % | 42<br>81 % |
| Միջին մասնագիտական կրթություն ունեցող դասախոսների և վարպետների թիվը, տոկոսը | 6<br>16 % | 5<br>17 % | 10<br>19 % |
| Ըստ մասնագիտության դասավանդող դասախոսների թիվը և տոկոսը | 38<br>100 % | 42<br>100 % | 52<br>100 % |
| Գիտական կոչում ունեցող դասախոսների թիվը և տոկոսը | - | - | - |
| ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերապատրաստում անցած դասախոսների, վարպետների՝ թիվը և տոկոսը | 10<br>26 % | 10<br>21 % | 17<br>33 % |
| Միջազգային ու հանրապետական պարբերականներում /ամսագրերում հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային ու այլ աշխատություններ ունեցող դասախոսների թիվը և տոկոսը | 1 | 1 | 1 |
| Դասավանդման ուսանողական, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող դասախոսների թիվը և տոկոսը | 38<br>100 % | 47<br>100 % | 52<br>100 % |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ համացանց կիրառող դասախոսների թիվը և տոկոսը | 34<br>95 % | 35<br>74 % | 40<br>77 % |
| Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող դասախոսների թիվը | 36<br>(կապված հեռավար կերպով դասերի անցկացմանհետ) | 47<br>(կապված հեռավար կերպով դասերի անցկացման հետ) | 10 |
| Դասախոսների միջին տարիքը | 41-50 | 41-50 | 20-40 |
| Դասախոսների բացակայությունների ընդհանուր թիվը | 23 | 7 | 6 |
| Ուսումնական տարվա ընթացքում քոլեջում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը | 9 | 3 | 14 |
| Ուստարվա ընթացքում դասախոսների, վարպետների / բաժնի վարիչների կողմից/ փոխադարձ դասալումների թիվը | 400 ժամ | 340 ժամ | 682 ժամ |

| | | | |
|---|---|---|---|
| Ուստարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը | 10 | 0 | 9 |

ԱՊՔ-ում գործում է բավականաչափ պրոֆեսիոնալ և փորձառու դասախոսական կազմ: Դասախոսների մեծ մասն ունի 20-40 տարվա մանկավարժական փորձ: Տալով ուսանողներին պետական չափորոշիչով սահմանված գիտելիքներ՝ նրանք մշտապես իրականացնում են արտածրագրային աշխատանք, հնարավորություն ընձեռելով ուսանողներին ընդլայնել իրենց գիտելիքները դասավանդվող առարկաների և մոդուլների շուրջ: Բացի այդ, ԱՊՔ-ի դասախոսական կազմը մեծ ուշադրություն է դարձնում ուսանողների բարոյահոգեբանական դաստիարակությանը և նրանց մոտ բարձր որակի անձնային հատկանիշների ձևավորմանը:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում, առարկայական հանձնաժողովների վարիչները ներկայացնում են հաշվետվություններ ամբիոնների առաջիկա աշխատանքների վերաբերյալ (բաց դասեր, առարկայի դրվածք, ստուգողական աշխատանքներ): Դասախոսները պարբերաբար դասալսումներ են կատարում: Քոլեջում ընդունված է բաց դասերին խմբովի դասալսման գնալը և դասը տնօրենի ներկայությամբ քննարկելը: Դասախոսները սիրով են ընդունում իրենց գործընկերների կողմից արված առաջարկությունները: Դասավանդման որակըբարձրացնելու, երիտասարդ դասախոսներին օգնելու, նրանց աշխատանքը վերահսկելու նպատակով հաճախակի են դասեր լսում տնօրենը, փոխտնօրենները, առարկայական հանձնաժողովների վարիչները, մեթոդիստը, կրթության որակի պատասխանատուն, փորձառու դասախոսները: Յուրաքանչյուր դասալսում արձանագրվում է համապատասխան դասալսման գրանցամատյանում:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները՝ որպես մարդու և հասարակության կարիքները բավարարող առարկաների ստեղծման արվեստ և գիտություն, ոչ այլ ինչ են, եթե ոչ միջոց՝ աշխատանքային հնարավորություններն ընդլայնելու համար: Քոլեջի կայքը համապատասխանում է արդի պահանջներին և նպատակաուղղված է միասնական տեղեկատվական դաշտի ստեղծմանը:

Քոլեջի դասախոսներն օգտվում են՝ mkuzak.am, arm.edu և այլ կայքերից:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է նաև դասախոսի դերը, զգալիորեն հեշտացնում յուրացման գործընթացը սովորողի համար, իսկ դասավանդողը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Դասախոսների մեծ մասն ունի բավարար համակարգչային գիտելիքներ և հնարավորություն այդ գիտելիքները կիրառել դասապրոցեսում՝ ստեղծում են շնորհանդեսներ, ուսումնական այլ նյութեր: Դասախոսների տրամադրության տակ են 2 համակարգչային կաբինետները՝ 30 ժամանակակից հզոր համակարգիչներով, համացանց մշտական ելքով, չորս պատճենահաններով և տեսածրիչով: Քոլեջի նյութական բազան նպաստում է ուսումնադաստիարակչական գործընթացում ժամանակակից կրթական, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը: Դասախոսներն օգտագործում են համացանցի էլեկտրոնային պաշարները, իրենց առարկաներին վերաբերող էլեկտրոնային ձեռնարկները: Կրթական ոլորտում կատարվող փոփոխություններին հետևելով՝ մենք որդեգրում ենք նոր մոտեցումներ մեր աշխատանքում:

## 3.3 ՔՈԼԵՋԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հաստատությունում ստեղծված է որակյալ կրթական միջավայր:

1. ԱՊՔ-ն ունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան, որը հագեցած է անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով և որից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, դասախոսները և վարչական կազմը:
   ԱՊՔ-ն ունի 2 լաբորատորիաներ՝ նախատեսված «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտության համար և «Ռոբոտատեխնիկա»-ի «Արմաթ» լաբորատորիան, ուսումնական կաբինետներ, մարզական դահլիճ, մշակութային դահլիճև այլ հատուկ ուսումնական լսարաններ, որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով:

**Աղյուսակ 23. Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին.**

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| Գրադարանի տարածքը քմ-ով | 36.60 |
| Ընթերցասրահի առկայությունը և տարածքը քմ-ով | 40,0 |
| Գրադարանում/ընթերցասրահում միաժամանակ նստելու հնարավորություն ունեցող անձանց թիվը | 20 |
| Գրադարանի գրապահոցի տարածքը քմ-ով | 15,8 |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 1 |
| Գրադարանում համացանցին միացված համակարգիչների թիվը | 1 |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳՄՍՆ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝ | 3696 |
| գեղարվեստական գրքերի թիվը | 1560 |
| տեղեկատվական գրքերի թիվը /բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/ | 15 |
| ուսումնամեթոդական գրքերի թիվը | 20 |
| ամսագրերի թիվը | 2 |
| այլ | 3 |
| Գրադարանային ֆոնդը նոր գրականությամբ վերջին անգամ համալրվելու ամսաթիվը | 20.09.2022թ. |
| Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը | Մասնագիտական և գեղարվեստական |
| Գրադարանից ամսական օգտվողների միջին թիվը | 15 |
| Գրադարանում բաժանորդագրված դասախոսների և քոլեջի մյուս աշխատակիցների թիվը | 32 |
| Գրադարանում բաժանորդագրված սովորողների թիվը | 98 |
| Պատասխանել այո կամ ոչ | |
| Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը | այո |
| Անցկացվու՞մ են արդյոք գրադարանում դասեր և պարապմունքներ | ոչ |
| Գրադարանավարն ունի՞ համապատասխան բարձրագույն կրթություն | այո |
| Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանավարն անցե՞լ է վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ | ոչ |
| Գրադարանը հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանո՞րդ է և օգտվու՞մ է նրանց պաշարներից | ՀՀ ազգային գրադարանիցայո |
| Գրադարանն ունի՞ էլեկտրոնային պաշարներ, որքա՞ն | ոչ |
| Սովորողները իրենց տնային հանձնարարությունները կատարելիս օգտվո՞ւմ են գրադարանային | այո |

| | |
|---|---|
| պաշարներից | |
| Գրադանավարը սովորողներին օգնու՞մ է հայթայթելու անհրաժեշտ նյութեր դասարանական և տնային հանձնարարությունների կատարման համար և ընթերցանության գրքերի ընտրության հարցում | այո |
| Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադարանի գրադարակներին /պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ | այո |
| Գրադարանն ունի՞ այն գրքերը, որոնք ամենից հաճախ են ցանկանում վերցնել սովորողները | այո |
| Գրադարանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր | ոչ |
| Գրադարանավարը կարողանու՞մ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից | այո |

Քոլեջի գրադարանը ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր օղակներից է. ուսանողների ուսուցման որակի վրա մեծ է գրադարանի պաշարների բովանդակության ներգործությունը:

Գրադարանն այսօր ունի 20 ուսանողի համար նախատեսված ընթերցասրահ և գեղարվեստական ու մասնագիտական գրականության, դասագրքերի գրապահոց: Ընթերցասրահը գեղեցիկ կահավորված է, որտեղ ստեղծված են հարմարավետ աշխատանքի բոլոր պայման-ները: Կա համակարգիչ: Քոլեջի բոլոր ուսանողները 2020-2021 ուստարվա սեպտեմբերի 6-ի դրությամբ ապահովված են եղել դասագրքերով: Կուրսղեկները, իրենց կուրսերի ավագների հետ, ըստ նախօրոք կազմված ժամակացույցի, գրադարանից ստացել են դասագրքերը և բաշխել ուսանողներին: Դասագրքերի վարձավճարների զնացուցակն արդեն սեպտեմբերից ծանոթ են եղել ԱՊՔ-ի ուսանողները: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է վարձավճարների հանձնումը: Վարձավճարների գումարը կազմել է՝ 145.000 դրամ, որը մուծվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ: Դասագրքերի բաշխումից հետո ակտավորվել են շրջանառությունից դուրս եկած դասագրքերը: Տարվա ընթացքում ակտիվ ուսանողների հետ նորոգվել են մաշված գրքե-րը: Շրջայցեր են ձեռնարկվել՝ ստուգելու դասագրքերի վիճակը: Կուրսղեկները սերտորեն համագործակցում են գրադարանավարի հետ: Կուրսղեկի ժամերին նրանք խոսում են մարդու կյանքում գրքի կարևորության, նրա խնամքի, պահպանության մասին:

Տարեվերջին կուրսղեները դասագրքերը հավաքել են և դրանց վիճակը ստուգելուց հետո հանձնել գրադարան: Քոլեջի աշխատանքում առանձնահատուկ նշանակություն է տրվում ընթերցանությանը. Այդ գործով զբաղվում են ինչպես կուրսղեկները, այնպես էլ դասավանդող մյուս դասախոսները: Աշխատակիցներն օգնում են նրանց խորհուրդներով, կազմակերպում մրցույթներ, որոնց ակտիվորեն մասնակցում են մեր ուսանողները: Գրադարանը մասնակցել է քոլեջում կազմակերպված բոլոր միջոցառումներին և բաց դասերին: Դասախոսները համաձայն են, որ քոլեջը բավական հարուստ գրադարան ունի, և կա ծրագրային գրականություն: Գրադարանավարը պատրաստակամությամբ նրանց է տրամադրում անհրաժեշտ գրքերն ու նյութերը, աջակցում բաց դասերի կազմակերպմանը, հստակորեն իրականացնում դասագրքերի բաժանումը տարեսկզբին ու հավաքը տարեվերջին:

Նվիրիր գիրք խորագրով անցկացված միջոցառման շրջանակներում 2021-2022թ. Տնօրինության, դասախոսների, ուսանողների կողմից գրադարանին նվիրեցին բազմաթիվ գրքեր, որոնց շնորհիվ. գրադարանային ֆոնդը հարստացվեց 70 օրինակ մասնագիտական և գեղար-

վեստական գրականությամբ, ինչպես նաև պատվիրված դպրոցական 120 օրինակ դասագրքե-րով:

**Աղյուսակ 24. Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետ-ների և դահլիճների վերաբերյալ.**

| Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ | Տարածքը (քմ) | Վերա-նորոգ-ման կարի-քը | Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները պարագաները (թվարկել հիմնականը և նշել քանակները) | Ուսումնանյութակա ն, ուսումնադիդակտի կ նյութերը | Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը |
|---|---|---|---|---|---|
| Դեղագործության և քիմիայի կաբինետ | 41,3 | ունի | Քարշիչ պահարան-1, քիմիական ապակեղենի պահարան-1, լաբարատոր փորձասեղան-1 լաբարատոր կշեռք-1 մագնիսական խառնիչ-2 ջրի թորման սարք-1 ժամացույցի ապակի 3սմ, 6սմ, լակմու-սի թուղթ, մեթիլ օրանժ, էլեկտրական վարկյանաչափ-10 չափանշված գլան 10, 25, 50մլ -5 լվացարան-1 գոլշիացման համար ճենապակեթասիկ, ունելի քացան, շպատել, էլեկտրական սալօջախ, լաբարատոր ջերմաչափ, սպիրտայրոց, էքսիկատոր | Նատրիումի հիդրօքսիդ, ֆենոլֆտալեին, ծծմբական թթու, էթանոլ | Գլյուկոզ, կալիումի հիդրօքսիդ, մեթիլեն կապույտ, գլիցերին, կալիումի յոդիդ, ֆենոլֆտալեին, մագնեզիումի ժապավեն, ազոտական թթու, ամոնիումի ռոդանիտ, երկաթի երկարժեք նիտրատ, ամոնիումի բիքրոմատ, կալցիումի գլյուկոնատ |
| ՆԶՊ-ի կաբինետ | 41 | ունի | Ուսանողական նստարան-30Սեղան-15 ամբիոն -1 դասախոսական սեղան-1 գրատախտակ-1 պահարան-1 դասախոսական աթոռ-1 | Հայկական զինու-ժին և հայկական բանակի զարգաց-մանը վերաբեր- վող գրականութ- յուն, վահանակ-ներ, տեսաֆիլմեր | Լազերային տիր |
| Համակարգչային օպերատորությանն ինֆորմատիկայի կաբինետ | 56,3 | չունի | ուսանողական սեղան-19 դասախոսական-1 համակարգիչ-16 տպիչ սարք | Ուսումնադի-դակտիկ նյութեր | Էլեկտոնային գրատախտակ, տպիչ սարք |
| Համակարգիչների շահագործման կաբինետ | 38,2 | չունի | Համակարգիչ-9, պահարան-1,սեղան-11, աթոռ-17 | ւսումնադիդակտիկ նյութեր | Էլեկտրոնային գրատախտակ, տպիչ սարք, 3D տպիչ |
| Գինեգործության լաբարատորիա | 6,5 | չունի | Սեղան չժանգոտվող մետաղից-2, մամլիչ-1, գինու շերտավոր ֆիլտր, ձագար,սառեցման թիթեղ, խցանողսարք, ալկոհոլը չափող գործիք, ռեֆրակտոմետր, խցան | | |
| ոցառումներիդահլիճ | 141 | ունի | Դաշնամուր, աթոռ-104, ամբիոն- 2, էկրան, զրապահարան, օդորակիչ, սեղան, դիոպրոյեկտոր | | |
| Սքայ (երիտասարդա-կան) ակումբ | 38,2 | չունի | Պահարան – 2, կլոր սեղան - 3 քառակուսի սեղան – 3, գրասեղան – 5 աթոռ -20, ֆլիպչարթի գրատախտակ – 1, հայտարարությունների մեծ տախտակ-1, հայտարարությունների փոքր տախտակ-1, նոութբուք – 2, մկնիկ – 1, պրոեկտոր – 1, պրոեկտորի էկրան - 1 բաններ – 1, ամբիոն - 1 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սպորտդահլիճ | 111 | ունի | Ուսուցչական սեղան-1, ուսուցչական աթոռ-1, պահարան-1, թենիսի սեղան-1, մարմնամարզական նստարան - 4, մատրաս – 6 հատ, պտտաձող-1, թռիչքի բարձրության ձող-1, շվեդական պատ -3, գնդակ | Հայկական սպոր-տի նվիրյալների և միջազգային սպոր-տի վառ ներ-կայացուցիչների մասին պատմող վահանակներ: | Գանտելներ, ծանրաձող, ցատկապարան, կանգնակներ |
| «Արմաթ» լաբարատորիա | 38,2 | չունի | Նստարան-7, աթոռ-13, պահարան-1, եռաչափ 3D տպիչ, հաստոց, ռոբոտաշինության հավաքածուներ | ցուցապաստառ | |
| Հրաձգարան | | կիսա-կառույց | | | |

2018թ-ից «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ»-ի օժանդակությամբ՝ Արարատի պետական քոլեջում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, որտեղ առկա է եռաչափ 3D տպիչ, հաստոց, ռոբոտաշինության հավաքածուներ և այլ սարքեր:

Քոլեջն ունի գինեգործության լաբորատորիա, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ժամանակակից պահանջները բավարարող գինեգործության դաս անցկացնելու և գինի պատրաստելու համար: Դասի ընթացքում քոլեջի դասախոսները մշտապես օգտագործում են ուսումնադիտողական պարագաներ (տեղեկատու պաստառներ, գինեգործության սարքա-վորումներ): Դասախոսների և ուսանողների ջանքերով վերանորոգվում և ստեղծվում են նոր պաստառներ, վահանակներ: Դահլիճի օգտագործումը չափազանց արդյունավետ է ուսանող-ների համար: Ըստ նախապես կազմված ժամանակացույցի այստեղ անցկացնում են տարբեր միջոցառումներ:

Ներկայումս ԱՊՔ-ի հիմնախնդիրն է՝ պահպանել առկա նյութատեխնիկական հագեց-վածությունը և անհրաժեշտության դեպքում համալրել նորագույն տեխնիկական միջոցներով:

## 3.4 ՔՈԼԵՋԻ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

**Աղյուսակ 25. Հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշնե-րը՝ ընթացիկ և նախորդ 2 ուսումնական տարիների համար.**

| Ցուցանիշներ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սովորող/դասախոս, վարպետ հարաբերություն | 406/38<br>11/1 | 500/47<br>11/1 | 568/52<br>11/1 | անփոփոխ |
| Սովորող/ սպասարկող վարչական անձնակազմ հարաբերությունը | 406/59<br>7/1 | 500/59<br>8/1 | 568/44<br>13/1 | աճ |
| Լսարանների միջին խտությունը | 406/25<br>16/1 | 500/25<br>20/1 | 568/26<br>22/1 | աճ |
| Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը | 289872 | 246544 | 186762 | նվազում, նվազում |
| Դասախոսի, վարպետների միջին աշխատավարձը | 133998,4 | 142342,7 | 130868 | աճ, նվազում |
| Վարչական աշխատողների միջին աշխատավարձը | 177865 | 177865 | 192270 | աճ |
| Սպասարկող կազմի միջին աշխատավարձը | 102331 | 102331 | 102331 | անփոփոխ |

2021-2022 թ. Վարչական աշխատողների միջին աշխատավարձը բարձրացել է, իսկ դա-սախոսների և վարպետների միջին աշխատավարձի ցուցանիշը նվազել է՝ դասախոսների թվի մեծացմամբ : Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի փոփոխություն չի եղել:

